№ 239 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 239

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տպարանի տելեֆօն № 228.

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Նոյեմբերի 1-ից մինչեւ տարւայ վերջը 2 րուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Փարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԻՎԱՆՕՎԻՉ ՄԱՆԹԱՇԵԱՆԸ ԵՒ ԻՐ ՈՐԴԻՆԵՐԸ

անկարող լինելով անձամբ շնորհակալութիւն յայտնել բոլոր նրանց, որոնք ցաւակցութիւն են յայտնել իրանց՝ Մանթաշեաններին հասած ծանր վշտի պատճառով և խորին զգացմունքով ջերմ յարգանք են մատուցել առաջինի ամուսնու, իսկ վերջինների մօր՝ անմոռաց

ԴԱՐԻԱ ԱԼԵՔՍԱՆԴՐՕՎՆԱ
ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

յիշատակին, սրանով յայտնում են իրանց սրտագին և խորին շնորհակալութիւնը այն բոլոր հասարակական հիմնարկութիւններին և անձերին, որոնք յարգել են հանգուցեալի յիշատակը: 1162. 1—1

„ՄԵՂՈՒ" Աշխատանքի Տան Ընկերութեան
ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ՀԱՄԱՐ հրաւիրված է հմուտ վարպետուհի:

Ընդունվում են ամէն տեսակ պատուէրներ կանանց և երեխաների զգեստների, վերարկուների, աշակերտական զգեստների (форменныя платья), սպիտակեղէնների՝ կանանց և տղամարդկանց, և այլն:

◆ ՉԱՓԱՉԱՆՑ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ ◆

Պատուէրները կատարվում են ամենայն ճշդութեամբ եւ արագ: Նոյն տեղը կէս գնով ծախվում են զանազան իրեր՝ մանկական զգեստներ, սպիտակեղէններ և այլն:

Նոյն Ընկերութեան կար ու ձեւի արհեստանոցին կից նոյեմբերի 15-ից բացվում են ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ կար ու ձևի երեկոյեան կուրսեր:

Ընդունելութիւնը նոյեմբերի 1-ից: Պայմանների մասին կարելի է դիմել՝ Гановская, № 7, «Մեղու» Աշխատանքի Տունը: (կ. հ.) տ. 1134. 3—2

„ՄԵՂՈՒ" Աշխատանքի Տան Ընկերութեան
ԿԱՐՕՔՕՉՆԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ՀԱՄԱՐ
հրաւիրված է հմուտ վարպետ՝ Յ. Բաբախանեան:

Ընդունվում են ամէն տեսակի տուփերի պատուէրներ. կոնդիտերսկի (շօկօլադի, մարմալադի, պիրօժնիի, տօրթի), գլխարկների, կօշիկների, ձեռնոցների, շերամի սերմի, ծխախոտի (ամէն տեսակի) և զանազան գործարանների տուփեր:

Ընկերութիւնը իւրաքանչիւր ամիս ստանում է արտասահմանից կոնդիտերսկի տուփերի համար ամենավերջին տարազի պատկերներ:

Պատուէրները կատարվում են արագ և ճշդութեամբ, մինչև այժմ չը տեսնված մատչելի գներով:

Գաւառական պատուիրողները կարող են ստանալ պրէյս-կուրանտ: Դիմել՝ Тифлисъ, Гановская № 7, Домъ Трудолюбія «Мегу». տ. 1133. (կ. հ.) 5—2

Երդուեալ-հաւատարմատարի
օգնական
Աղեքսանդր Պապովեանը
ՏԵՂԱՓՈԽՎԵՑ
Вельяминовская ул., № 30.
(ա. օ.) (տ.) 1121. 10—6

ԲԺԻՇԿ
Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ
Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1.
(երեկոյեան ժ. 5—7.
Երևանեան հրապարակ—Պուշկինսկ. փ., № 1.
(ե. հ. կ.) (տ.) 1045. 100—20

ՆԵՐՔԻՆ ԻՄԱՍՏԸ

Այն անհատները, որոնք լաւ չեն ըմբռնում Բոսֆորի ափերում կատարվող դէպքերի ներքին բնաւորութիւնը և նշանակութիւնը, բոլորովին սխալ ձևակերպութիւն են տալիս հայերի և Թիւրք կառավարութեան յարաբերութիւնների խնդրին:

Այդ անհատները ասում են. «Լաւ չէ, որ հայերը կապած լինեն այն կառավարութեան հետ, որի ղեկավարներն են երիտասարդ-թիւրքերը. որովհետև պատրիարքը հանդիսանում է իբրև Թիւրքահայերի պաշտօնական ներկայացուցիչ, ուստի նրա բռնած ներկայ դիրքը խելացի չէ»:

Մենք ասացինք՝ դա սխալ ձևակերպութիւն է:

Կասենք աւելին: Այդ ձևակերպութիւնը մթնացնում է երևոյթների և դիրքերի ներքին իմաստը:

Նա բոլորովին անտեղի կերպով փոխադրում է իբրեւ ծանրութեան կենտրոնը բոլորովին ուրիշ կէտերի վրա:

Յիրաւի քննութեան ենթարկենք այդ ձևակերպութիւնը:

Նախ և առաջ պէտք է նկատենք, որ առ հասարակ ցանկալի չէ, որ Թիւրքահայերի և իրանց կառավարութեան միջև ծագեն թիւրիմացութիւններ, գժտութիւններ և ընդհարումներ:

Ցանկալի չէ, երբէք ցանկալի չէ. դա կասկածից դուրս է:

Բայց իրական կեանքը դժբաղդաբար չէ ստեղծում այնպիսի գեղեցիկ դրութիւն, որ այդ ոչ ցանկալի երևոյթը դառնայ մշտական կանոն:

Անկախ ձեր ընդհանուր ցանկութիւնից, անկախ ձեր հակառակ համբերութեան ճիգերից՝ հանդէս են գալիս եղելութիւններ, որոնք այլ ևս անկարելի են դարձնում լռութիւնը, և ասպարէզ է ելնում գանգատը, բողոքը:

Եթէ յարաբերութիւնների լաւ պահպանութեան համար պէտք է լռել և տանել ամէն բան, եթէ չարիքների երևան գալուց պէտք է միայն կողմնակի հանդիսատեսի դեր կատարել և մեղմել հիմնաւոր գանգատի և արդարացի բողոքի ձայնը, այն ժամանակ ոչինչ չունենք առարկելու:

Բայց այդպէս չէ դրութիւնը:

Պատրիարքարանը ներկայումս արտայայտիչ է հանդիսանում շատ ծանրակշիռ ազգային տրամադրութեան:

Եւ Թիւրքաց կառավարութիւնը լաւ գիտէ, որ նա գործ ունի ոչ պատանեկական դիւրաբորբոք մի շարժման հետ, ոչ պատահական հովերի մի արտայայտութեան հետ, այլ Թիւրքահայերի ազգային ներկայացուցչութեան հետ:

Ազգային ժողովը և պատրիարքարանը կռւել չեն ուզում օսմանեան կառավարութեան հետ, այլ հաստատուն հիմքերի վրա հաշտ ապրել: Պատրիարքը իբրև ազգային ներկայացուցիչ հանդէս չէ գալիս Թիւրքական այս կամ այն կուսակցութեան հետ բանակցութիւններ վարելու, այլ նա դիմում է գոյութիւն ունեցող Թիւրքական կառավարութեանը իր առաջադրութիւններով: Նա «պօլիտիկա» չէ խաղում հին կամ նոր Թիւրքիայի ներկայացուցիչների հետ. նա իր ազգի շահերի դատն է ներկայացնում օսմանեան կառավարութեանը, պահանջելով արդարութիւն:

Երբ անցեալ տարի Կ. Պօլսում գտնվող հայ խմբակցութիւնների մի ստուար մասը թեքվեց դէպի ահրարները և հակառակ դիրք բռնեց դէպի երիտասարդ-թիւրքերը, մենք այդ համարեցինք սխալ քայլ: Եւ երբ գործողները ուղղեցին իրանց սխալը, մենք հանգստացանք:

Բայց ներկայ ազգային ժողովի և անցեալ տարվայ խմբակցական հակառակութիւնների միջև ոչ մի առնչութիւն չը կայ: Երևոյթները տարբեր են իրանց ներքին իմաստով:

Եթէ ազգային ժողովը խառնվէր Թիւրք քաղաքական կուսակցութիւնների հաշիւների մէջ և բանակցութիւններ վարէր մասնաւոր քաղաքական տարրերի հետ, դա անշուշտ մի ճակատագրական սխալ կը լինէր: Նա այդպիսի բաների մէջ չէ խառնվում և չէ մտածում խառնվել. նա գործ ունի միայն պաշտօնական Թիւրքիայի հետ: Նա ոչինչ չէ բաժանում և ոչինչ չէ անջատում. նա իր ազգի շահերն է պաշտպանում այն մարմնի առաջ, որ օսմանեան կառավարութիւն անունն է կրում:

Ազգային ժողովը գործ ունի ոչ թէ այս ու այն կուսակցութեան, ոչ թէ յատկապէս երիտասարդ-թիւրքերի հետ, այլ օսմանեան կառավարութեան հետ:

Այդ տեսակէտը պէտք է իւրացնել և ապա մտենալ ծագած թիւրիմացութիւնների քննութեանը:

Այժմ կանգ առնենք պատրիարքի և Բարձրագոյն Դրան միջև ծագած եղելութեան վրա:

Մի՞թէ պատրիարքի և օսմանեան կառավարութեան միջև ծագած անհամաձայնութիւնը միայն մի հինգ անձի ազատութեան խնդիր է, ինչպէս այդ ձգնում են պնդել Թիւրք կառավարութեան բռնած դիրքի ջատագովները:

Անշուշտ ոչ:

Խնդիրը աւելի ծանրակշիռ է:

Եթէ կանգ առնենք նոյնիսկ այդ հինգ հայերի կախաղան բարձրացնելու վրա, կը տեսնենք, որ այդ գործողութեան շուրջը դիզվել են մի շարք այնպիսի բարդութիւններ, որոնք պահանջում էին ազգային ժողովի կողմից ուժգին բողոք վարչական խարդաւանքների դէմ: Ազգային ժողովի համար պարզ է իբրև ցերեկվայ լոյս, որ ադանացիներին ամենամեծ աղէտ հասցնողը եղել է Թիւրքական զօրքը, որը գործել է իր հրամանատարների թելադրութեամբ: Մինչև զօրքերի գալը հայերը և մահմեդականները կռւում են եղել միմեանց դէմ հաւասար աջողութեամբ և յաղթանակներով. բայց մահմեդականները, կայացնելով կարճատև խաղաղութիւն հայերի հետ, ժամանակ են վաստակել զօրք և խուժան հաւաքելու Ադանայի շուրջը: Եւ մի՞թէ այն րօպէից յետոյ, երբ զօրքը միակողմանի կերպով միջամտելով գործին՝ 15,000 հայ մարդ գետին գլորեց, արդարութեան վերականգնումը և մորմոքված սրտերի գոհացումը այն բանի մէջ պէտք է լինէր, որ դարձեալ հինգ հոգի աւելանային հազարաւոր զոհերին, երբ անպատիժ էին մնում ջարդարարները և զօրքի հրամանատարները. իսկ բանտերում շարունակում էին տառապել ադանացի հայերը:

Անշուշտ՝ ազգ. ժողովի համար հինգ հոգի նոր զոհերը թւական տեսակէտով ոչնչութիւն էին այն 15,000-ի մէջ, որ ընկան օսմանեան կանոնաւոր զօրքի համապետական սահմանադրական գնդակներից, բայց բարոյական տեսակէտով նրանց նշանակութիւնը այն ժամանակ, երբ ջարդարարները մնացել են անպատիժ, մի այնպիսի դժոխային սարսեցնող ծաղր էր, որի դէմ բողոքում էր անարգված խղճի և մոռացված արդարադատութեան յուսահատ ճիչը:

Իսկ ի՞նչ էր ասում այդ բոլորի դէմ վարչական պատասխանը:

«Պատրիարքը իրաւունք չունի այդպիսի բողոքներ ներկայացնելու. նա պէտք է իր կրօնական ծէսերով զբաղվի»:

Այո, առաջարկվում էր, որ պատրիարքը միայն կարգադրէր 15,000 հոգու դիակների թաղման և հոգեհանգիստների ծէսերը կատարելու: Աւելի ոչինչ:

Ազգային ժողովը ծանրակշիռ բնաւորութիւն տուեց ծանրակշիռ խնդրին և այն ժամանակ, երբ օսմանեան վարչական շրջանները ամէն ճիգ են թափում սեղմելու և, փոքրացնելով ծագած խնդիրը, ձևացնելու նրան իբրև մի հինգ հոգու ազատութեան հարց, բարձրաձայն յայտարարեց, որ նա իր ներկայացուցիչ պատրիարքի հետ միասին նայում է իբրեւ դրութեան վրա այն լրջութեամբ, որ նա ունի ըստ էութեան:

Ա. Քալանթար

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Արդաբիլ, 27 հոկտեմբերի

Աջողութեամբ հոկտ. 25-ին եկան Ումանի գնդի մի հարիւրեակ կօզակներ: (Հ. Գ.)

—

Թաւրիզ, 27 հոկտեմբերի

Թաւրիզի ռուսահպատակ վաճառականները ուրախութեամբ ողջունում են ռուսաց զօրքերի առաքումը Արդաբիլ, յուսալով որ կազատվեն շահսէվանների և ղարադաղցիների կողոպտելուց: Տեղեկութիւն ստացվեց Րահիմ-խանի մօտ բանակցութիւնների գնացած Րէշիդ-ուլ-Միւլքից, որ Րահիմ-խանը մտադիր է շահսէվանների հետ միասին գնալ Թէհրանի վրա՝ սահմանադրութիւնը արմատախիլ անելու համար: (Հ. Գ.)

—

Արդաբիլում տիրող դրութեան մասին «Баку» թերթի Աստարայի թղթակիցը հետևեալ տեղեկութիւններն է հաղորդում.

«Պարզվում է, որ դեռ հոկտ. 18-ին 200-ից աւելի շահսէվաններ մտան Արդաբիլ կանանց շորերով և միայն այդ խորամանկութեան շնորհիւ քաղաքը վերցրին համեմատաբար դիւրին կերպով:

«Սաթթար խանին և նրա ձիաւորներին աջողվեց փախչել Թաւրիզ:

«Շահսէվանները ամէն բան մատնեցին կրակի և սրի. Փչացրին նաև ռուսահպատակներ: Քարուքանդ են արված և հրդեհված ոստիկանական վարչութիւնը, քաղաքային ինքնավարութիւնը, անջումանի շինութիւնը, դատարանի շէնքը և այլն: Քաղաքացիներից ամէն բան խլվեց: Քաղաքը աւերակի տեսք ունի: Ռուսական փոխ-հիւպատոսարանը, որ գրաւում է մի ամբողջ փողոց, այնպէս է լցված փախստականներով, որ, ինչպէս յայտնեց հիւպատոսարանի պահակախմբի պետը, «եթէ խնձոր ձգվի հիւպատոսարանի բակը, գետին չի ընկնի»:

«Աւազակների գլխաւոր դիւանը գտնվում է Կել-Խօրան գիւղում, քաղաքից 5 վերստաչափ հեռու, իսկ Արդաբիլում գիշերները մնում են 100 պահապաններ Մամէդ-Ղուլի խանի հրամանատարութեան ներքոյ:

«Բաստ նստածները աղաչում են օգնել նուէրներով: Օգնութեան մասին դիմել են նաև նահանգապետը և Աստարայի անջումանի անդամները:

Աստարա են մտնում լաւ զինված զօրախմբեր, որոնք միացեալ ույժերով առաջ են շարժվում շահսէվանների դէմ: Առայժմս եկել են 4 զօրամաս՝ ընդամենը 850 մարդ: Սպասում են 800 նացիօնալիստների Մուիզ-ուլ-Սալթանէի առաջնորդութեամբ: Եփրեմը ուղարկվում է Զէնջանի վրայով»:

—

(„Кавказъ" թերթի Րաշտի թղթակցի տեղեկութիւններից)

Տեղական «Խէյրուլ-Քէլամ» օրաթերթում տպվեց Արդաբիլի անջումանի կոչը, որի մէջ նկարագրվում է քաղաքի ողբալի դրութիւնը: Անջումանը թախանձում է Գիլանի անջումանից և կառավարութիւնից որքան կարելի է շուտով ույժ հասցնել, որ կարելի լինի քաղաքն ազատել շահսէվանների ձեռքից: Որովհետև յիշեալ կոչը գրված էր մինչև Արդաբիլը շահսէվաններից գրաւումը, Արդաբիլի յետագայ վիճակի մասին, գրաւվելուց յետոյ, յայտնի է միայն այն, որ շահսէվանները ներս են խուժել Արդաբիլ հանդիպելով վերին աստիճանի թոյլ դիմադրութեան ինչպէս բնակիչների, այնպէս և տեղական կառավարական ձիաւորների ու ֆէդայիներ կողմից, որոնց առաջնորդ Սաթթար-խանը ոչ միայն չը վստահացաւ կռիւ սկսել, այլև անյայտացաւ յայտնի չէ ուր. ինչպէս ասում են, նա թագնվեց Սեբաբի խանութեան մէջ:

Նոր կառավարութիւնը Արդաբիլ ուղարկելու համար Պարսկական Աստարայում կենտրոնացրեց մօտ 400 ձիաւորներ և ֆէդայիներ, իսկ Ղազվինի վրայով ուղարկվում է Եփրեմը 200 ձիաւորներով:

Այսօր կամ վաղը Րաշտ է գալու Աստարա գնալու համար Մօիզզի-Սալթանէն ձիաւորներով: Տեղումս ստացված տեղեկութիւնների համաձայն, զանգանցիները ընդունել են կառավարութիւնից նշանակված նահանգապետին:

Գիլանի իշխանութիւնների ջանքերը, թեքելու իրանց կողմը Թալիշ-դօլաբցիներին միահամուռ ույժերով շահսէվանների դէմ մաքառելու համար, աջողութեամբ չը պսակվեցին: Շահսէվանների պարագլուխները նամակներ են ուղարկում Արդաբիլի վիճակին մօտ գիւղերը, պահանջելով վճարել տուրքերն իրանց և միանալ իրանց հետ յետագայ կռւի համար, իսկ անհնազանդներին սպառնում են խիստ պատիժով:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պօլիս, 27 հոկտեմբերի

Ի նկատի ունենալով որ լուրեր են տարածված, իբր Րակօնիջիում տեսակցութեան ժամանակ ընդունվել են մի քանի վճիռներ, որոնք աննպաստ են Թիւրքիայի շահերին, «Թանին» լրագիրը հերքում է այդ լուրերը: (Հ. Գ.)

—

Վիէննա, 15 հոկտեմբերի

Էնվէր-բէյը, Հակկը-բէյը և Սալի-բէյը, Բեռլինի, Վիէննայի, Պետերբուրգի կցորդները միաժամանակ գնացին Կ. Պօլիս: Էնվէր-բէյի հետ խօսակցած անձինք համոզված են, որ Թիւրքիայում հասունանում են վերին աստիճանի կարևորագոյն դէպքեր: («Б.»)

—

Կ. Պօլիս, 15 հոկտեմբերի

Կառավարութիւնը կարգադրեց յետաձգել մինչև տարվայ վերջը Ադանայի վիլայէթի առևտրա-արդիւնաբերական դասակարգերից տուրքերի գանձումը: («Б.»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բուդապեշտ, 27 հոկտեմբերի

Այսօր Վիէննայում Ֆրանց-Յովսէփ կայսրն ընդունել է Վեկկերլէին: Կայսրը յայտնել է, որ վճիռ կը կայացնէ ճգնաժամը մօտիկ ապագայում լուծելու վերաբերութեամբ, բայց ամենից առաջ կը ցանկանար լսել Կօշուտի և կոմս Անդրաշիի հայեացքները: Վերջինները այս օրերս կընդունվեն կայսրից: (Հ. Գ.)

—

Սիդնէյ, 27 հոկտեմբերի

Ածխահանքերում գործադուլի պատճառով ծառայութեան կանչվեց ամբողջ ոստիկանութիւնը: Երկաթուղային վարչութիւնը գրաւեց պահեստների և նաւերի ածուխը, որի մանրածախսի գները աւելացան հարիւր տոկոսով: (Հ. Գ.)

—

Սիդնէյ, 27 հոկտեմբերի

Նիւկէստլում առևտուրը ամբողջովին կանգ է առել: Հանքային բանւորները մի յատուկ ժամանաժողով ընտրեցին գործադուլի պատճառները ձևակերպելու համար: Մինչև գործադուլը ամէն օր ուղարկվում են 100 վագօններ քարածուխով: Հանքատէրերը պարտ են բանւորներին մօտ 20,000 ֆունտ ստէրլինգ աշխատավարձ: (Հ. Գ.)

—

Բագու, 27 հոկտեմբերի

Սև քաղաքում երկրորդ օրն է այրվում է Լէյտէսի նաւթային գործարանը: Այրվեցին մօտ 300,000 փութ նաւթ, կերօսին և մազութ: Վնասները հասնում են 175,000 ր.: (Հ. Գ.)

Պետերբուրգ, 26 հոկտեմբերի

Հեռագիր ստացւեց, որ ռուսաց հիւպատոսարանը Արդաբիլում կրակոտ կերպով գնդակահարվում է ամեն կողմից պաշարված շահսէվաններից։ Կան ծանր վիրաւորվածներ երկու կողմերից։ Հիւպատոսարանը բոլորովին կտրված է քաղաքից։

Սահմ.-ռամկավարների, մահմեդականների, առաջադիմականների, աշխատաւորականների և լեհական ֆրակցիաները համաձայնութիւն կապեցին իրար միջև խաղաղ վերանորոգչական Եփրեմովին Պետական Դումայի նախագահի օգնական ընտրելու համար։

Ռուսաստանի և Ֆինլանդիայի ընդհանուր գործերի քննութեան համար մտադրվում է Պետական Դումայի մէջ ընդունել 5 ֆինն պատգամաւորների և Պետական Խորհրդի մէջ 4-ի։ («Б.»)

—

Պարիզ, 27 հոկտեմբերի

Պատգամաւորների պալատը 379 ձայնով ընդդէմ 142-ի ընդունեց ընտրողական բարենորոգման օրինագծի առաջին յօդուածը, որ պատգամաւորների պալատի անդամների ընտրութիւնները սահմանում է ընդհանուր դեպարտամենտական ցուցակներով։ Նոյն յօդուածի երկրորդ մասը, որ սահմանում է ընտրութիւնների համեմատական սիստեմ, ընդունվեց 281 ձայնով ընդդէմ 235-ի։ Բուէարկութեան հետևանքն ընդունվեց ծայրայեղ ձախակողմի, աջակողմի և կենտրոնի երկարատև ծափահարութեամբ։

Դրանից յետոյ մինիստր-նախագահ Բրիանը բողոք յայտնեց բարենորոգման դէմ, դնելով վստահութեան հարցը։ Այն ժամանակ պալատը մերժեց առաջին յօդուածն ամբողջովին 291 ձայնով ընդդէմ 235-ի։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 27 հոկտեմբերի

Պատգամաւորների պալատը վերջացրեց բարենորոգման օրինագծի վիճաբանութիւնները։ (Հ. Գ.)

—

Ադիս-Աբեբա, 27 հոկտեմբերի

Մենելիքի առողջութիւնը լաւանում է։ Կեանքին այլևս վտանգ չէ սպառնում։ (Հ. Գ.)

—

Լոնդոն, 27 հոկտեմբերի

Լորդերի պալատը առաջին ընթերցումով ընդունեց ֆինանսական բիլլը։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 27 հոկտեմբերի

«Պոլ. Կոր.»-ին հաղորդում են Աթէնքից, որ յունական գործերին լաւատեղեակ շրջաններում անհնարին են համարում, որպէսզի Թագաւորը հարկադրվի հեռանալ երկրից. դինաստիական հարցը բարձրացնելու բոլոր ջանքերը ապարդիւն անցան։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

II

Շարժումը, որի գլուխ է կանգնել Դուրեան պատրիարքը, սկսվեց նրա հրաժարականով պատրիարքական պաշտօնից, համաձայնութեամբ թէ կրօնական ժողովի և թէ քաղաքական ժողովի, որը սակայն, յետոյ, փոխեց իր ուղղութիւնը և դաւաճանեց իր նախկին որոշման, թողնելով պատրիարքին միայնակ և աշխատելով որ նա յետ առնէ իր հրաժարականը։ Սակայն պատրիարքը անդրդուելի մնաց և կոչումն արեց ազգին, որի կամքը արտայայտվեց հոկտ. 9-ին կայացած ազգային ժողովում. տապալվեց պարտաղանց և խոստմնազանց քաղաքական ժողովը, որի ղեկավարն էր հանդիսանում կուսակցական Յ. Շահրիկեանը։

Արդ, որո՞նք են Դուրեան պատրիարքի հրաժարականի էական պատճառները, ինչի՞ մէջ է կայանում հայ ժողովրդի, հայ մտքի և խղճմտանքի ըմբոստացումը օսմանեան այժմեան կառավարութեան բռնած քաղաքականութեան դէմ և ինչ պահանջներ են դնում պատրիարքը և իր ժողովուրդը, որոնց իրագործումը վերահաստատէր կատարեալ խաղաղութիւն և մտքերի անդորրութիւն։

Պատրիարքի հրաժարականի վերաբերմամբ աննպաստ կարծիքներ արտայայտեց թէ թիւրքական և թէ եւրօպական մամուլը։ Այդ մամուլը ձգտում էր արդարացնել թիւրքաց այժմեան կառավարութեան գործելակերպը, քաղաքականութիւնը և բաւականաչափ պատճառաբանված ու հիմնաւորված չէր գտնում պատրիարքի հրաժարականը և նրա պահանջները։ Պատրիարքի հրաժարականի մասին աննպաստ կարծիք էր յայտնում և դաշնակցական մամուլը։

«Баку» թերթը իր №237-ում առաջ է բերել պատրիարքի հրաժարականի և պահանջների էութիւնը, խտացած կերպով, հիմնվելով «Հէլլենիզմ», «Ստամբուլ», «Պրօօդօս», «Ազատամարտ», «Բիւզանդիոն»՝ յոյն, ֆրանսիական և հայ թերթերի յօդուածների վրա։ Այդ յօդուածը մենք առաջ կը բերենք, որովհետև առաջին՝ հնարաւորութիւն չը կայ առաջ բերել բոլոր լրագիրների կարծիքները, երկրորդ՝ այդ յօդուածի մէջ ամփոփված է խնդրի էութիւնը.

«Յիշեալ լրագիրների թղթակիցների հետ ունեցած տեսակցութեան ժամանակ, Դուրեան պատրիարքը յայտնեց, թէ հայերը կորցրել են ամեն մի յոյս իրանց դրութեան բարւոքման մասին Թիւրքիայում, և, առհասարակ, քրիստոնեաները, օսմանեան կայսրութեան մէջ, սահմանադրական կարգի օրով, աւելի քիչ չը պէտք է տանջվեն և կռւեն իրանց գոյութեան համար, քան այդ եղել է թիւրքական տիրապետութեան բարբարոս շրջանում։ Թիւրքիայում մացրված որպէս թէ ազատամական րէժիմը մնում է իրականութեան մէջ նոյն թէօկրատիական րէժիմը, որպիսին տիրում էր դարերի ընթացքում։ Այդ րէժիմի օրով անհնարին է որևէ պրօգրէս և որևէ լուրջ փոփոխութիւն։ Ինչ որ էլ ասեն որոշ իդէօլօգներ և կօսմօպօլիտներ Մուհամմէդ մարգարէի վարդապետութեան համերաշխութեան և ազատ մտածողութեան մասին, բայց փաստն այն է, որ Ղուրանը չէ ճանաչում քրիստոնեաների հաւասարութիւնը մուսուլմանների հետ, և քանի դեռ Ղուրանը կը մնայ խարիսխ և հիմնական սկզբունք պետականութեան, օսմանեան կայսրութիւնը, պատրիարքի համոզմունքով, չէ կարող բարձրանալ և գնալ քաղաքակրթված ազգերի հետքով։

«Իսլամի ծագումից ի վեր հաստատվեցին որոշ հասկացողութիւններ, նախապաշարմունքներ, բարքեր և սովորութիւններ, յատուկ մուսուլմանական, որոնք տեղի չեն տալիս գրեթէ ոչ մի փոփոխութեան և անհաշտելի հակասութեան մէջ են գտնվում քաղաքակիրթ աշխարհի ընդհանուր շարժման հետ։ Ի հաստատութիւն այդ կարծիքի, պատրիարքը ցոյց տուեց գործող սահմանադրութեան երկդիմի բնաւորութիւնը. արտաքուստ նա այնպէս է գրված, որ իբր թէ Թիւրքիայում չը կայ այլևս բացարձակ իշխանութիւն, չը կայ ազգային և կրօնական բաժանումն, չը կայ իշխանութեան և օրէնքների ի չարն գործադրութիւն, չը կայ իրաւունքների և արդարադատութեան ոտնակոխութիւն եայլն։ Եւ սակայն, կառավարութեան բոլոր գործողութիւնների մէջ—գոնէ վերաբերեալ քրիստոնեաներին—նոր կազմի գոյութեան ամբողջ ժամանակ չարտայայտվեց խիստ օրինականութեան և արդարադատութեան ոչ մի ակտ, չը տրվեց բռնապետութեան և բռնակալութեան բացակայութեան ոչ մի ապացոյց, չը դրվեց արգելք իրաւունքների եղծման, կամայականութեան և անգթութիւնների։ Մի խօսքով, «ազատութեան և հաւասարութեան» դրօշակի տակ ամեն բան ընթանում էր և ընթանում է պետութեան մէջ նոյն կարգով, որ գոյութիւն ունէր բացարձակ կարգի ժամանակ, իսկ մի քանի դէպքերում՝ աւելի ևս սանձարձակ, համարձակ և խիստ կերպով։

«Ներկայացնելով շատ լուրջ ապացոյցներ երիտասարդ-թիւրքերի դէպի յոյները ցոյց տուած յարաբերութիւնների շրջանում, Դուրեան պատրիարքը նկարագրեց հայերի դրութիւնը Փոքր-Ասիայում այն ողբալի ձևով, որի մէջ գտնվում էր Աբդիւլ-Համիդի օրով։ Գծելով հայերի կրած աղէտների, ճնշման և յուսահատութեան ընդհանուր պատկերը գունագան վիլայէթներում, Դուրեան պատրիարքը վերադարձաւ Ադանայի դէպքերին, որ ստիպեց նրան տալ հրաժարական, որը սուլթան Մուհամմէդը դեռ չէ ընդունել։ Այդ առիթով պատրիարքը ասաց հետևեալը.

«— Երբ ինձ ընտրեցին պատրիարք ես պարտ համարեցի անմիջապէս գնալ մեծ վէզիրի մօտ և խնդրել, որ Ադանայի ջարդի յանցաւորներն օրինակելի կերպով պատժվեն։ Չը բաւականանալով բանաւոր յայտարարութեամբ՝ ես դիմեցի կառավարութեանը գրաւոր բողոքով Ադանայի իշխանութեան անգործունէութեան և քրիստոնեաներին կոտորելու նրա դրդումների դէմ։ Տեսնելով որ կառավարութիւնը ուշացնում է իմ թղթերի պատասխանը, ես նորից դիմեցի մեծ վէզիրին անձնական բացատրութեամբ։ Չը տեսնելով մեծ վէզիրի ինձ տուած խոստումների արդիւնքը, ես կրկնեցի իմ դիմումները թղթերներով և ձեռք բերեցի այն, որ կառավարութիւնը յայտնեց ինձ, թէ Ադանայում հաստատվել է զինուորական-դաշտային դատարան և թէ ոչ մի յանցաւոր չի ազատվի արժանի պատժից։ Եւ սակայն ահա ինչպէս կատարեց կառավարութիւնը իր խոստումը. 20,000 հոգու կոտորածի գլխաւոր դրդիչները, «Իթիդալ» լրագրի խմբագիր Իհսան Ֆիկրին և Աբդիւլ-Կադըր անունով ազդեցիկ մի թիւրք մինչև այժմ ազատ ման են գալիս։ Մի քանի տասնեակ թափառաշրջիկ-մուսուլմաններ դատապարտվեցին կախաղանի, բայց նախ՝ նրանք հանդիսացան միայն իբրև քաւութեան նոխազներ, իսկ երկրորդ՝ նրանցից շատերի մահապատիժը փոխվեց բանտարկութեան։ Բայց հայերի հետ դատաքանը չէր քաշվում. Ղասաբ-օղլի չորս եղբայրներ և մի քանի ուրիշ հայեր, որոնց մեղաւորութիւնը կայանում էր միայն ինքնապաշտպանութեան մէջ, կախաղան հանվեցին անյապաղ, իսկ հարիւրաւոր հայեր նետվեցին Ադանայի, Արճէշի, Երզանկայի, Քէսաբի, Մարաշի և Կիլիկիայի այլ քաղաքների բանտերը, սպասելու դատավարութեան։ Այդ բոլորի մասին ես նոր թղթերով յայտնեցի մեծ վէզիրին, որին նկատել տուի, թէ Կ. Պոլսից ուղարկված նպաստները ամբողջովին ընկնում են մուսուլմանների ձեռքը, իսկ սպանված հայերի որբերը և այրիները մեռնում են քաղցից և բացի դրանից ենթարկվում են ոստիկանների և ժանդարմների անարգ բռնաբարութեան»։

Այս խօսքերի մէջ ամփոփված են պատրիարքի հրաժարականի գլխաւոր պատճառները։ Սակայն հրաժարականից յետոյ ևս տեղի ունեցան այնպիսի դէպքեր, որոնք աւելի և աւելի ուժեղացրին նրան, և ոչ միայն պատրիարքը, այլ և ամբողջ հայ ժողովուրդը ստիպվեց մտածել հայութեան ապագային սպառնացող լուրջ վտանգի մասին Թիւրքիայում։

Տեսնենք այդ դէպքերը։ Շահրիար

ԿԵՂԾԻՔՆԵՐԸ ՉԵՆ ԴԱԴԱՐՈՒՄ

(Յովնանեան դպրոցի հոգաբ. ընտրութեան առիթով)

—

Կեղծիքները չեն դադարում մեր մէջ։ Շանտաժի և կեղծիքի մի նոր ապացոյց տուել են այս օրերս Մողնու մի քանի ծխականները, ուղարկելով սինօդ մի բողոքագիր, ստորագրված ոչ թէ այն ծխականներից, որոնք մասնակցել են վերջին ընտրութեան, այլ որոնք ոչ ներկայ են եղել այդ ժողովին, ոչ ևս մասնակցել։

Մեր ընթերցողներին յայտնի է, որ Յովնանեան դպրոցի նոր հոգաբարձութեան ընտրութեանը համար Մողնու եկեղեցին պէտք է ընտրէր 4 պատուիրակներ։ Այդ ընտրութիւնը կատարվեց մայիսի 30-ին և պատուիրակներ ընտրվեցին Ս. Մելքումեան, Ն. Կաճկաճեան, Հ. Առաքելեան և Աւ. Վարդապետեան։ Սակայն յայտնի ուղղութեան մարդիկ, որոնց թեկնածուն էր Ստ. Լիսիցեանը, որ քուէարկութեան ժամանակ աւելի քիչ ձայն էր ստացել քան Աւ. Վարդապետեանը, տեսնելով իրանց պարտութիւնը, ժողովը փակվելուց յետոյ, առանց նախագահի, լոկ քարտուղարի մասնակցութեամբ մի նոր արձանագրութիւն են կազմում, կեղծ թերթիկներ սպրդում պատռվածներից և դուրս բերում, թէ իբր քուէարկութեան արդիւնքը ճիշդ չէ արձանագրվել, չը նայելով որ եղել են 3 ստուգիչներ։ Այդ հիման վրա նրանք բողոք են ներկայացնում առաջնորդին, որի մէջ խնդրում են ճանաչել Ստ. Լիսիցեանին և ոչ Աւ. Վարդապետեանին պատուիրակ։ Առաջնորդը, քննելով բողոքը և գտնելով որ թիւրիմացութիւնը կամ բողոքը գլխաւորապէս չորրորդ պատուիրակի մասին է, որոշում է ոչ Ստ. Լիսիցեանին և ոչ էլ Ա. Վարդապետեանին ճանաչել պատուիրակ, այլ չորրորդ պատուիրակի նոր ընտրութիւն կատարել տալ։ Այդ ընտրութիւնը կատարվում է սեպտ. 27-ին և չորրորդ պատուիրակ է ընտրվում Ն. Տէր-Ղևոնդեան։ Ժողովին մասնակցողներից 4 հոգի, երբ իմանում են ընտրութեան արդիւնքը (Ստ. Լիսիցեանը, բացակայ, ստացել էր միայն մի ձայն), չը նայելով որ իրանք ևս մասնակցել էին քուէարկութեան, թէև ստորագրում են արձանագրութեան, բայց մնում են առանձին կարծիքի։ Այդ 4 անձինքն են ատամնաբոյժ Ն. Կաճկաճեան, Ն. Մատինեան, Տ. Թադէոսեան և Ա. Թադէոսեան։

Ի հարկէ այդ 4 հոգին, որոնք մասնակցել էին ժողովին, կարող էին բողոքել և չընդունել ընտրութիւնը, թէև նրանց վարմունքը անկօրեկտ է, քանի որ նրանք պէտք է ընտրութիւնից առաջ հրաժարվէին և չը մասնակցէին նրան. բայց ընդունենք այնուամենայնիւ, որ նրանք իրաւունք ունէին բողոքելու։ Եւ նրանք բողոքում են, բայց կատարում են մի աններելի կեղծիք. Նրանք իրանց բողոքը ստորագրել են տալիս և այնպիսի անձանց, որոնք ամենևին ժողովին չեն մասնակցել, առանց սակայն յիշելու բողոքագրի մէջ այդ հանգամանքը։ Եւ մեր մէջ սկիզբն է դրվում մի նոր տգեղ երևոյթի, որ դուք չէք նկատի ոչ մի օրինաւոր հասարակութեան մէջ։ Ոչ մի օրինաւոր հասարակութեան մէջ ոչ մի օրինաւոր անդամ թոյլ չի տայ իրան՝ մասնակցած չը լինելով անձամբ մի որևէ հասարակական ժողովի, տեղեկութիւն չունենալով նրա գոյութեան մասին, ստորագրել բողոք այդ ժողովի դէմ։ Եթէ այդ դրութիւնը ընդունելի լինի, այն ժամանակ շատ հեշտութեամբ կարելի է ամեն մի օրինաւոր ժողով, որ գումարվել է օրէնքի բոլոր պահանջների պահպանութեամբ, որ կայացրել է յայտնի որոշումներ, քանդել տալ՝ ստորագրել տալով դրսում, փողոցում այս և այն բաղդախնդիր կամ պատահական անձանց բողոք այդ ժողովի դէմ։ Մողնու ժողովը կայացել է 31 ծխականների մասնակցութեամբ, որոնցից 27-ը ստորագրել և վաւերացրել են կատարված ընտրութիւնը, իսկ 4 ծխական առանձին կարծիքի են մնացել։ Բողոքել կարող էին միայն այդ 4 ծխականները և ոչ այնպիսի անձինք, որոնք ոչ մի մասնակցութիւն չեն ունեցել ժողովին։

Այդ բողոքին ստորագրել է ի թիւս այլոց նաև Ստ. Լիսիցեան։ Եթէ մի տգէտ վաճառական և արշիննիկ, չը յարգելով իր արժանապատւութիւնը կամ չունենալով իր արածի գիտակցութիւնը, կատարել է այդպիսի մի անգոռնելի կեղծիք, ամենևին ներելի չէ Ստ. Լիսիցեանի պէս անձին դառնալ տգէտների և կօրրեկտութեան արժանապատւութեան մասին ոչ մի գաղափար չունեցող կամ միայն արշիննիկի գաղափար ունեցողների ընկերը։

Եւ օրինաւոր ժողովները ապօրէն, փողոցային միջոցներով, կեղծ ստորագրութիւններով քանդել աշխատելու պատիւը իր ամբողջ փայլով պատկանում է այսուհետև Մողնու 4 ծխականներին, որոնք, անկասկած, փողոցներն ընկած մուրացել են ստորագրութիւններն այն մարդկանց, որոնք ժողովում ամենևին չեն եղել։

Վերջ դրէք կեղծիքներին, ընթացէք մաքուր, շիտակ ճանապարհով, պարոններ։ Եթէ ձեր բողոքը օրինաւոր և արդարացի լինի, բաւական են և 4 ստորագրութիւնները. հարկ չը կայ դիմել կեղծիքների։

Ժողովին մասնակցողներից մինը

ՄԵԾ ՀՐԴԵՀ ՍՈՒՐԱՄՈՒՄ

—

Սուրամ, 25 հոկտեմբերի

Շաբաթ, ամսիս 17-ին, լոյս կիրակի գիշերվայ ժամը 1-ին Սուրամի հրէական թաղում, Իսրայէլ Թանուրեչվիլիի տանը հրդեհ սկսվեց, որ լափեց ամբողջ հրէական թաղը՝ խլելով հայերից ևս երեք տուն։

Նախ քան բուն խնդրին անցնելը, աւելորդ չէր լինի մի քանի խօսք ասել Սուրամի շինութիւնների վերաբերեալ։ Այստեղ մարդիկ աշխատում են փոքր տեղի վրա շատ տուն շինել և որքան կարելի է՝ էժան։ Հէնց դրա համար բոլոր տները մէկը միւսին կպած են և համարեա բոլորը փայտից. բաւական է մի տուն այրվի, այնուհետև մինչև փողոցի ծայրը կրակը առանց կանգ առնելու լափում է իր առաջը կտրած բոլոր փայտեայ շինութիւնները, փչացնելով տասնեակ տարիներով արիւն-քրտինքով ձեռք բերած աշխատանքը։ Ահա այդպիսի հրդեհներից մէկն էր, որ պատահեց ամսիս 17-ի գիշերը։ Պէտք էր տեսնել, թէ ինչպէս հրէաները գլուխները կորցրած խլում էին կրակի ճանկերից իրանց ունեցածները, իսկ վերջինների ձեռքից փախցնում էին մօտակայ գիւղերից եկած վրացի գիւղացիները, որոնք իբրև թէ աջակցութիւն էին ցոյց տալիս թշուառներին։ Մարդիկ սարսափած դուրս էին փախչում անկողնից և օգնութիւն աղաչում, բայց ի զո՜ւր, կրակը իր գագաթնակէտին էր հասել։ Վտանգ էր սպառնում ամբողջ Սուրամին։ Հայկական թաղը սրտատրոփ սպասում էր իր սև օրվան. ղօղանջում էր եկեղեցու զանգը և օգնութեան կանչում. վտանգի մէջ էր նաև եկեղեցին դպրոցի հետ միասին. բաւական էր որ կրակը կպչէր տեղիս գործակալ Յովսէփ քահ. Առիւծեանցի տանը, այնուհետև ոչ մի հնարաւորութիւն չէր լինի ազատելու եկեղեցին և դպրոցը հայկական թաղի հետ միասին։ Հէնց դրա համար քանդեցին վերոյիշեալ քահանայի տան տանիքը և պատշգամբը և փողոց էին նետվում տան կահ-կարասիքը և սրանով թոյլ չէին տալիս, որ կրակը անցնէր հայկական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱԼՈՅԸ

Զ.*)

> 5. Le comité ottoman Union et Progrès et le comité ottoman Tachnaksoution considérant les événements de Constantinople et les tueries d'Adana comme un tribut du sang leur attention et tous leurs efforts viseront à l'observance de la ligne politique adoptée en commun.
>
> Salonique, le 24 agoustos 1325.

Միթէ այն օրինաւոր արեան հատուցումն է, որ ամեն անկախութեան ձգտող, ինքնազատութեան համար պատերազմող, ընկերական կաշկանդող լուծ մը թօթափող պարտի թրջել Արեսի յաղթական քայլափոխը։

Պատմութեան էջերը արեամբ կը մկրտուին և ազատութեան դրօշը առանց այդ օրինաւոր դարձած հարկատուութեան չի կրնար փառապանծ ծածանիլ։ Իտալիան՝ իր գարիբալդեանները զոհ տուաւ։ Բուլղարիա և Հէլլէնք նմանապէս։ Ճափոնն իսկ իր ազգութեան դէմ փոթորկող վտանգին դէմ բանակներ թաղեց։ Սակայն որքա՜ն հեռաւոր նմանութիւն այդ ազգերու և մեր վիճակին բաղդատութիւն մը։ Ատոնք, վաղ կամ ուշ, ամէնքն ալ իրենց նպատակին հասած են. մինչ մենք, որ անդորր կենցաղ մը կը փափագինք, տարիներով ազատ, ներսէն-դրսէն նպաստներով մեր վէրքերը կը դարմանենք, կողբանք մեր աւերակները և նահատակները, քանզի՝ մեր ներքին խռովութեանց մէջ՝ պատերազմիկէն աւելի ժողովուրդը տուժեց՝ պարզ և չէզոք ականատեսը։ Արեան տուրքը ազատութեան գանձագինն է։ Ինչ ազդու հակապատկեր մեր խեղճ վիճակին և Ֆերդինանդի գահին և Սավօյայի տան պայծառացման։ Զմեզ մխիթարող այս յօդուածէն բռնազբօսիկ բացատրութիւն մը չենք գտներ։ Ահա արեան տուրքին բուն իմաստը։ «Ինչպէս Թիւրք սպաները Պօլսոյ վերջին դէպքերին չարամահ կորան, մենք ալ Ադանայի կոտորածը նոյն սուրբ նպատակին զոհ տուինք»—ըսելով մխիթարելու ենք։

Այսինքն 300 Թիւրք զինւորի փոխարէն 20,000 հայ անմեղ ժողովուրդ։ Անհաշտ բաղդատութիւն մը. եղական փոխադարձ։

Համեմատենք այս անգամ ալ Համիդի բռնակալ վարչութեան երկուստեք պատճառած զոհերը, և թէ ո՞վ շահւոր եղաւ իր զոհերէն հանդերձ։ Ամեն անգամ որ հայը 20,000 զարգացողները և կրած անհամար զրկանքները վիճաբանութեան սեղանին կենթարկէ, Թիւրքերը իսկոյն կը պատասխանեն, թէ իրենք ալ շատ կրեցին և ինչէր կորուսս տուին։ Անցածը մոռցած ըլլայ. հիմա ամենքնիս եղբայր ենք, ամենքնիս օսմանցի. Ջանանք մեր ընդհանուր հայրենիքը պայծառացնել և այլն։ Բարի. սակայն մեր վիճակը տարբեր է հիմա։ Ինչ որ մենք կորսնցինք, դուք շահեցաք։ Առաջին սահմանադրութեան օրով մեր համեմատութիւնը, ցեղական առաւելութիւնները խանգարուած է։ Արդէն այդ նպատակին համար նրբամիտ պաշտօնեայ կայսրը ցրուեց խորհրդարանը։ Դիտեցէք 1878-ի և 1909-ի հայուն կացութեան սարսափելի տարբերութիւնը։ Այո, դուք ալ զոհեր տուիք. որքան, չի գիտցուիր։ Ինչ որ յայտնի է, այն է, որ այս ոճիրները Վօսփօրի ջրերէն շատ չհեռացան. հազուադէպ կը յիշատակուի Անատօլիի բանտերուն մէջ Թիւրքի մը չարչարանքն ու մահը։ Համիդի վարչութեան դրութիւնը երկու կէտ նպատակ ունէր. առաջինը՝ հայութիւնը ջնջել, որուն մասին երբէք չծուլացաւ, չյոգնեցաւ. երկրորդ՝ իր տարրը առաջ մղել, այն պայմանով, որ իր դէմ չըլլալու։ Թիւրք յեղափոխականին դէմ որքան անողոք գտնուեցաւ, նոյնքան օրինակները շատ են իրեն ներումին և բարեացակամութեան։ Նոյն իսկ դիրք շահելու համար միջոց մը եղած էր՝ Եւրոպա փախուստ տալ, որպէսզի խոշոր ամսականով Պոլիս վերադառնալ, հաւատարմութեան երդում ընելու։

Համիդ, իր առաջին ծրագրոյն յաջողութեան համար, նախաձեռնեալ համարեց վերահսկական արագ դրութիւնը՝ որ է ջարդ։ Այդ յաջորդական կոտորածները սքանչելի հնարքներով կազմակերպուեցան, մինչ միւս կողմանէ հայուն այլևս Թիւրքիայի մէջ ապրիլը անկարելի կը դարձնէր։

Կենակցական, դարերէ բխած կապերը, հայն ու Թիւրքն իրար հաշտեցուցած ըլլալով, խոհեմութիւն չէր ձեռնարկը վտանգել, տեղացի Թիւրքը բնիկ հայուն դէմ նետելով։ Դէպքերը ապացուցին սուլթան Համիդի հեռատեսութիւնը. քանի՜ Թիւրքեր, իրենց կաթնեղբայրները կամ բարեկամները կամ հալածուողները պարզ մարդասիրական զգացումով ազատեցին։

Ուստի կոտորածի բանակ մը կազմակերպուեցաւ, իսլամ ժողովուրդէ բաղկացած, Անատօլիի մի քանի կարևոր կեդրոններու մէջ, որոնց պարտականութիւնն էր որոշ սահմանագծի մէջ գործել, առնուած հրահանգին համեմատ։ Անշուշտ որ դիւրին չէր այսպիսի կազմակերպութիւն մը, զոր մի քանի կարող քննիչ փաշաներ՝ խաղաղութիւնը վերահաստատելու, վեց նահանգներուն բարեկարգումին պատրուակաւ կայսեր ծրագիրը խղճի մտօք կատարեցին, և մնացեալը ամենուս ծանօթ է։

Այս աննախընթաց պատուհասէն ճողոպրողը՝ ի դարձին՝ դրամարկղը, տունը, ամեն ինչ թալանուած գտնելէն յետոյ՝ Թիւրքէն արհամարհանքին և իր բնակավայրին սահմաններուն մէջ բանտարկուելու դատապարտուեցաւ, ինչպէս էին արդէն վեհապետը և իշխանազուններ։ Կապրէինք, քիչ շատ ահ ու դողով, մեր շուրջէն վախնալով, ճգնելով խնդիր չունենալ Թիւրքին հետ։ Անցագիրի դժուարութիւնը բոլորովին կործանեց հայ վաճառականը, մինչ Նէմլի-զադէներ, Իպրահիմներ, հազարաւոր իսլամներ, աւելէն և կողոպուտէն օգտուելով, կը տիրանային ոչ միայն հայուն գաւառին խանին և ագարակին, այլ նոյն իսկ առևտուրի հրապարակին։

Թիւրքը՝ բաւական էր որ քաղաքական խնդիրներու չխառնուէր, ազատ էր շրջելու, բէյի պէս ապրելու. իրեն վերապահուած էին ամեն դիրք և պատիւ։

Այս դժուար կացութեան ելք մը մտածեց հայը. Թիւրքին մօտենալ, անոր ձեռքով և անունով իր վաճառականական գործողութիւնները կատարել, շահաբաժին հանել անոր՝ միայն Թիւրք ըլլալուն առաւելութեանն։

Մինչ Թիւրք վաճառականները Ստամբոլի հրապարակին վրայ իրենց հոյակապ խաները և աշխատատեղիները կը կանգնեն ոսկեզօծ տառերով անուններն ճակատներուն վրայ կախելով, հայ վաճառականին խանութին ապակիներն իրենց համեստ մերկութեամբ կը փայլին։ Մականուններս անգամ ստիպուեցանք փոխելու, նոյ՞ն իսկ անունինս. Տրդատը՝ Թալաթ ըրինք, Յովհաննէսը՝ Եահեա։

Այս յարատև հակահայ հալածանքը զմեզ ուժասպառ լքեցուց. մեր զաւակները յուսահատ թողուցին գացին, գաղթելով օտար աշխարհ։

Հայրենիք դառնալ ուզողն իսկ կերկնչէր, ուր նախ և առաջ բանտն իրեն կը սպասէր։ Որքան Թիւրքիայէն դուրս ելլելը դժուարին էր, աւելի դժուար էր ներս մտնելը։ Առաջինը լոկ դրամով կըլլար, զոր իսլամը կը գրպանէր նորէն, իսկ երկրորդը՝ անհրաժեշտ բանտուելով, դրամն ալ ջուր։

Այս դիրքէն օգտուող քաղեցին յոյները և հրէաներ, յանուն պետութեան հաւատարիմ հպատակներ։

Պետական դպրոցներու մէջ հայ աշակերտը՝ եթէ մէկ ուսմով ծով անգամ կըլլէր, կարելի չէր, որ առաջին մրցանակին արժանանար. քանի որ տուիկ իսլամն յատ-

---

*) Տես «Մշակ» №№ 131, 133, 134 և 135.

Թաղը· մեծ վնաս հասաւ յիշեալ քահանային, որի տունը թէպէտ չայրվեց, սակայն կորցրեց կահ-կարասիքը և քանդվեց տունը։

Առաւօտը, երբ բնութիւնը զարթնում էր երկարատև քնից, Սուրամի շրջակայ դաշտերից և բլուրներից լսվում էին սուրամցիների լացն ու կոծը, սիրտ մաշող հառաչանքն ու վայնասունը, և ոչխարների նման թափթփվել էին գետնին՝ անիծելով իրանց սև բաղդը, լոյս կիրակին։

Կիրակի առաւօտը պրիստաւը և Միքայէլ Աւիծեանցը անտուն մնացած ժողովրդին տեղաւորեցին ամարանոցի համար շինված շինութիւններում և սկսեցին աղքատներին օրական 7 պուդ հաց բաժանել։ Ընդամենը այրվել է 120 տուն և բացօդեայ են մնացել 700 մարդ։ Վնասը հասնում է 500,000 րուբ.։

Ամսիս 21-ին Նորին Կայսերական Մեծութեան գահակալութեան առիթով, տեղիս ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում և այրված սինագօգայում գոհացողական մաղթանք կատարվեց, որից յետոյ գործակալ Յովսէփ քահ. Աւիծեանցը և հրէաների ռաբբին ամենահպատակօրէն Նորին Կայսերական Մեծութեանը հեռագրով դիմեցին՝ աղերսելով Նրա բարի հայրական հովանաւորութիւնը դէպի Թշուառները։

Երկու օրից յետոյ յայտնվեց, որ Կայսրը 5000 րուբլի էր բարեհաճել նուիրել յօգուտ Թշուառների։ Կազմակերպված է առանձին մասնաժողով աղէտեալներին օգնելու համար։ Կառավարութիւնը արգելել է այրված տեղերում նոր շինութիւններ շինելը։

Ս. Մանուկեան

ԿՌԻՒ՝ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹԵԱՆ ԴԷՄ

II ու III դասախօսութիւն

Հոկտ. 11-ին ու 18-ին կայացան երկրորդ ու երրորդ դասախօսութիւնները։ Ունկնդիրների ահագին մեծամասնութիւնը դարձեալ իգական սեռիցն էր։ Դասախօսն էր բժշկապետ Գ. Լ. Գրաուէրմանը, որ խօսեց յղութեան մասին՝ շատ շնորհալի։

Սակայն ցանկալի էր, որ հարցին վերաբերող նուրբ մանրամասնութիւններն այնքան էլ չը շօշափվէին, այլ նկատի առնըվէին լոկ էական կողմերը։ Մեր ժամանակում, երբ, Կամիլ Ֆլամմարիօնի շնորհիւ, նոյնիսկ աստղագիտութիւնը ժողովրդականացված է, կարծեմ, դժուար չէ՝ տալ միջակ պատրաստութիւն ունեցողներին այս կամ այն գիտութեան հիմունքները՝ կոնկրետ կերպով։

Չեմ կարող չը շեշտել և այն հանգամանքը, որ թէպէտ յարգելի դասախօսը բացատրում էր մարդկային սաղմը և նրա հետ կապ ունեցող բոլոր առարկաներն ու գործառնութիւնները, տալով իւրաքանչիւրին իր իսկական անունը, սակայն ամբողջ դահլիճն ականջ էր դնում, ասես թէ, առաքելական դարերի որևէ սուրբ կրօնաւորի։

Ամուսնական կեանքի համար կատարեալ հասունացած լինել ցանկացող աղջիկն,—ասաց յարգելի դասախօսը,—պէտք է լինի 24 տարեկան, որպէսզի նրա մայրութիւնն էլ լինի գիտակցական և զաւակներն՝ առողջ։ Եթէ մայրը տկար է լինում սրտի, թոքի, մանաւանդ սիֆիլիս հիւանդութիւնից, ծնունդը լինում է վաղաժամ։ Անտանելի են և դատապարտելի մանաւանդ ծնելու յանցաւոր դէպքերը (արհեստական վիժումները)։ Ռուսաց պետական օրէնքով՝ եթէ երեխան ծնվում է հօր մեռնելուց 306 օր յետոյ, ճանաչվում է օրինաւոր ծնունդ, հետևապէս և ժառանգ։

Բայց յղի կնոջը վնասում են և շրջապատողների նկարագրութիւնները, որոնցով երկիւղ են ներշնչում նրան, մինչդեռ, դրա հակառակ, նրան անհրաժեշտ է առանձին հոգատարութիւն (уходъ), որպէսզի հնարաւոր լինի կանոնաւորել նրա նիստ ու կացը։

Նա պէտք է շարժվի մաքուր օդում գոնէ օրը մի ժամ կամ, եթէ այդ անյարմար է, երկու անգամ՝ կէս-կէս ժամ։ Շարժվելն օգտակար է և այն կողմով, որ աղիքները կը գործեն կանոնաւոր։ Բայց նա պէտք չէ յաճախի եկեղեցի, թատրօն, առհասարակ բազմամարդ տեղեր, որովհետև այդ տեղերում օդ չը կայ։ Նրան շատ վնասակար է՝ պառկել կակուղ տեղեր, օրինակ՝ բազմոցի վրա և այլն։ Կարող է լողալ գետում։ Բայց մի քաղաքից միւսը գնալ չէ կարելի, մանաւանդ առաջին ամիսներում։

Գործարանում բանելը՝ յղի կնոջ համար ուղղակի չարիք է. օրէնքը պարտաւոր է պաշտպանել նրան։ Եւրոպական շատ երկրներում այդ բանն արգելված է. բայց, այդ կողմից, Ֆրանսիան, Թիւրքիան ու Ռուսաստանը շատ յետ են մնացել։ Մինչդեռ Շվէյցարիայում նոյնիսկ պահանջվում է, որ այդպիսի կինը ծնելուց յետոյ վեց շաբաթ չը բանի, եթէ չէ ուզում զրկվել իր ռոճիկից։

Ի՛նչքան մի կին՝ օրիորդութեան ժամանակ՝ շատ է լինում երես առած ու քմահաճ, այնքան տանջվում է յղութեան ժամանակ։ Առհասարակ յղի կանայք պէտք է ձեռք առնեն որոշ յարմարութիւններ։ Օրինակ. գօտիկ կապելը շատ է ազատում այդպիսի կնոջը վտանգներից, իսկ կօրսետից անմիջապէս պէտք է հրաժարվել։

Նա շատ պէտք է զգուշանայ ցրտից, հակառակ դէպքում՝ կը ստանայ երիկամունքի հիւանդութիւն։ Կերակուրը սովորականը պէտք է լինի. պէտք է ուտել չափաւոր, մսեղէնից՝ քիչ, բուսեղէնից՝ շատ։ Կարևոր է մորթի մաքրութիւն և շփում։ Օգտակար է վաննա ընդունել ամեն օր։ Ջրի տաքութիւնը պէտք է լինի 27—28°, տևողութիւնը՝ 13 րօպէ։ Իսկ ամենափոքր անկանոնութեան դէպքում պէտք է դիմել բժշկի։

—

Միջարարից յետոյ դասախօսեց պրիվատ-դոցենտ Ա. Ա. Կիսելը։ Նիւթն էր՝ «Ծծի երեխայի խնամատարութիւնը»։

Յայտնի է,—ասաց յարգելի դասախօսը,—որ Ռուսաստանում մեռնում է մէկ միլիօն երեխայ՝ ծնվելու առաջին տարում։ Մանկութեան այդ շրջանում առանձին ու կանոնաւոր խնամք է հարկաւոր երեխային։ Նրան անհրաժեշտ է՝ լինել օդում և լոյսի մէջ. իսկ մնացած պէտքերի մէջ առաջին տեղը բռնելու է մաքրութիւնը՝ միայն ո՛չ այդ բառի սովորական մտքով։ Ես չեմ խօսում նրա հագուստի մաքրութեան մասին, այլ՝ նրան շրջապատող փոշու և կեղտի, որովհետև փոշին պարունակում է իր մէջ ամենատեսակ հիւանդութիւնների սաղմը։

Միւս կողմից, մանկանոցը մեծ նշանակութիւն ունի երեխայի առողջապահութեան տեսակէտից։ Բայց, մեզնում, մեծ ու միջակ տների ճարտարապետները շատ փոքրիկ տեղ են յատկացնում երեխային, մի փոքրիկ սենեակ՝ մէկ լուսամուտով։ Նրանք մոռանում են, որ մանկանոցում երեխան մենակ չէ. նրա մօտ են լինում և իր մայրն ու դայեակ։ Ի՛նչ օդ պէտք է շնչի երեխան, որին հարկաւոր է նոյնքան թթուածին, ինչքան և մեծերին։ Բացի դրանից, ընտանիքը մեծանալիս, պէտք է ընդարձակվի և մանկանոցը. իսկ եթէ այդ անկարելի է, այդ դէպքում, այնտեղ պէտք է լինեն միայն երկուսը՝ մայրն ու երեխան։

Մանկանոցին շատ քիչ բան է հարկաւոր. մի մահճակալ, մի աթոռ ու մէկ մեծ սեղան։ Այնտեղ պէտք չէ լինի ոչ մի շտոր (պատի թանձր վարագոյր), որի վրա շարունակ նստում է ահագին քանակութեամբ փոշի և առաջ է բերում զանազան հիւանդութիւններ։ Իսկ հիւանդութիւնների մեծ մասն առաջանում է միկրոբներից, ինչպէս վկայում են այժմեան շատ բժիշկներ։ Անհրաժեշտ է նոյնպէս, որ երեխայի վերմակ-ներքնակն ամեն օր դուրս փռվեն՝ առաւօտից մինչև երեկոյ։ Ու, որ գլխաւորն է, իբրև անհրաժեշտ կանոն, պէտք է ընդունել, որ գիշերներն անկարելի է փակել մանկանոցի դուռը. երեխան պէտք է շարունակ հաղորդակցութիւն ունենայ դրսի օդի հետ։

Բայց մեզանում, շատ հին ժամանակներից, կազմված է այն համոզումը, թէ երեխան առհասարակ և մանաւանդ 6 ամսականը ցրտին չէ կարող դիմանալ։ Սակայն դա ոչ միայն բոլորովին սխալ է ու անտեղի երկիւղ, այլ և ուղղակի՝ նախապաշարում։ Ահա մի օրինակ։ Երբ հրդեհվում է որևէ փայտեայ տուն, այն միջոցին, երբ դուրսը թանձր ձիւն է նստած, քնաթաթախ, մերկ ու բոբիկ մարդիկ դուրս են թափվում սենեակներից ու ժամերով մնում բաց օդում։ Ո՞վ է լսել, որ այն ցրտին դուրսը մնացած մարդիկ հիւանդացած լինեն։ Երբէք։ Ուրիշ օրինակ. Ցուսիմայի պատերազմում մի քանի հազար զինուորներ 12—18 ժամ մնացին պաղ ջրում, բայց ոչ ոք չը վնասվեց։ Կարճ. թէ ձմեռ, թէ ամառ, փոքրիկ երեխաներին պէտք է պահել օդում։

Վերջին 10 տարիներում հանդիպում ենք այնպիսի մայրերի, որոնք իրանց 6 ամսական երեխաներին պահում են օդում, և նրանք ոչ միայն չեն վնասվում 10—12° ցրտում, այլև օգտվում են։ Միայն պէտք չէ թոյլ տալ, որ երեխան քնի ցրտում. իսկ քնած ժամանակը կամ պէտք է զարթեցնել, կամ տուն տանել։ Մանաւանդ այս անհրաժեշտ է այն չքաւոր ընտանիքներին, որոնք ունեն միայն մէկ սենեակ։ Իսկ ամառը երեխան աւելի երկար պէտք է մնայ օդում, որովհետև արևի ճառագայթները շատ լաւ են ներգործում նրա կազմուածքի վրա, և նա ազատ է մնում միկրոբներից։

Է. ք. Ն.

Մոսկվա, 20 հոկտեմբերի

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

Պետերբուրգ, 26 հոկտեմբերի

8-րդ նիստը բացված է ժամը 12-ին։ Նախագահում է իշխ. Վոլկոնսկին։

Հերթին պայմանական դատապարտութեան օրինագծի վիճաբանութիւններն են։

Ի պաշտպանութիւն օրինագծի հանդէս է գալիս հոկտեմբերեան Կապուստինը, որ կոչ է անում չը վախենալ ողորմածութիւն և խաղաղութիւն խնդրող միջոցներից։

Պուրիշկեվիչը մի երկար ճառով խօսում է օրինագծի դէմ, ասելով որ օրինագծի հեղինակները ուզում են ամնիստիա տալ պայմանական դատապարտութեան դիմակի տակ. այդ դէպքում աւելի լաւ է ուղղակի տալ ամնիստիան (ծափ. ձախից)։

Լեախնիցկին յայտնում է, որ աշխատաւորականները օպպօզիցիա չեն կազմում ներկայ նախագծի վերաբերութեամբ և կը պնդեն, որ օրինագիծն ընդունվի դատական բարենորոգումների մասնաժողովի խմբագրութեամբ։

Յայտարարվում է ընդմիջում։

Նիստը վերսկսվում է ժամը 2 և 10 րօպէին։ Օթեակումն է արդարադատութեան մինիստրը։

Եպիսկոպոս Միտրոֆանը աջակողմեանների կուսակցութեան կողմից ընդունելի և ցանկալի է համարում կառավարութեան օրինագիծը մի քանի փոփոխութիւններով և լրացումներով։

Արդարադատութեան մինիստրը հարկաւոր է գտնում դիմել Դումային խոնարհաբար խնդրելով պայմանական դատապարտութիւնը քննել ամեն տեսակ քաղաքական տեսակէտներից անկախ, այլ սոսկ քրէական նպատակայարմարութեան տեսակէտից։

Անդրօնօվը յայտարարում է, որ հոկտեմբերեանները ընդունում են օրինագիծը մասնաժողովի խմբագրութեամբ, հաստատ հաւատալով, որ նրա հետևանքները դրական կը լինեն։ «Ֆրակցիան դէմ չէ, որ պայմանական դատապարտութիւնը տարածվի նաև բանտարկվածների վրա և նրա գործադրութիւնը յանձնվի երդուեալների դատարանին, որովհետև պայմանական դատապարտութիւնը ոչ թէ պատժի թեթևացումն է, այլ լոկ ռեպրեսսիայի աւելի նպատակայարմար ձև» (ծափ. կենտրօնում և ձախից)։

Գեգեչկօրին ըստ էութեան օրինագծի ասում է, որ սօցիալ-դեմօկրատները, տեսնելով նրա մէջ փոքր-ինչ առաջադիմական տարր և այդ պատճառով չը ցանկանալով ի կորուստ մատնել նրան իրանց ձայներով, ձեռնպահ են մնում ձայնատուութիւնից, որովհետև հասարակական ուժերի ներկայ յարաբերութիւնների ժամանակ այժմեան օրինագծի գործադրութիւնը դրական հետևանքներ չի տայ։

Աջէմեանը, բանաձևելով խօսակցութիւնները, օրինագծի դէմ արված առարկութիւնները բաժանում է 3 խմբակների. առաջին՝ Զամըսլօվսկու ցուցմունքները նախագծի տեխնիկական պակասութիւնների մասին. այդ ցուցմունքները, զեկուցագրի կարծիքով, հիմնված են թիւրիմացութեանց վրա. դրանց արդէն պատասխանեց արդարադատութեան մինիստրը. երկրորդ խմբակ—օտար պետութիւնների օրինակներ բերելն է, որոնք նոյնպէս անհիմն են, և վերջապէս երրորդ խմբակ—առարկութիւններ ըստ էութեան։ Զեկուցանողը բերում է դատական շատ գործիչների կարծիքները պայմանական դատապարտութեան մասին։ Վերջում Աջէմեանն ասում է, որ Դուման նախագիծն ընդունելով կապացուցանէ, որ ժողովուրդը ոտք է դրել կուլտուրական զարգացման ուղիի վրա (ծափ. ձախից)։

Ձայների մեծամասնութեամբ ընդդէմ աջակողմեանների ընդունվում է յօդուածային ընթերցմանը դիմելու առաջարկութիւնը։

Առաջին յօդուածը, թեթև վիճաբանութիւններից յետոյ, քուէարկութեամբ, ձայների առաւելութեամբ, ընդունվում է դատական մասնաժողովի խմբագրութեամբ այն իմաստով, որ պայմանական դատապարտութիւնը տարածվում է նաև այն անձանց վրա, որոնք պէտք է բանտ նստեն։

Երկրորդ յօդուածն ընդունվում է առանց վիճաբանութիւնների։

Երրորդ յօդուածի առիթով ընդունվում են Զելիշևի լրացումը, որ պայմանական դատապարտութիւնը չը տարածվի ոգելից խմիչքներ գաղտնագողի վաճառող անձանց վրա, և Տիմօշկինի առաջարկութիւնը, որ պայմանական դատապարտութիւնը չը տարածվի խոշոր եղջիւրաւոր անասուն գողացողների վրա։

Ժամը 11 և 5 րօպէին նիստը փակվում է։ (Հ. Գ.)

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԲԱՐԱԹԱՇՎԻԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոկտեմբերի 24-ին Վրաց թատրօնում Գրիգոլ Ռօբաքիձէն կարդաց մի դասախօսութիւն՝ նուիրված վրաց բանաստեղծ Նիկօլօզ Բարաթաշվիլուն։ Դասախօսութեան թեման էր՝ «Նիկօլօզ Բարաթաշվիլու հոգեկան դրաման»։

Նախ քան Ռօբաքիձէի դասախօսելը, բժ. Գօմարտէլին հանդիսականներին ծանօթացրեց բանաստեղծի կենսագրութեան հետ։

Բարաթաշվիլին ծնվել է 1816 թւին։ Աւարտելով գիմնազիան նա մտադիր էր շարունակել ուսումը համալսարանում, սակայն նիւթական բացակայութեան պատճառով չը կարողացաւ իր մտադրութիւնը ի կատար ածել։

Ապա մտադիր էր զինուորական ծառայութեան մէջ մտնել, սակայն դրան խոչընդոտ հանդիսացաւ նրա կաղ լինելը (մանուկ հասակում վայր ընկնելուց վնասել էր իր մի ոտը)։

Երկար դեգերումներից յետոյ նա որոշեց մտնել ոստիկանական ծառայութեան մէջ, որպիսի մտադրութիւնը իրականացրեց։

Լինելով ուրախ, քէֆ անող մի մարդ ըստ երևոյթին, Բարաթաշվիլին խորունկ մտածող և հայրենիքի ցաւերով տանջվող մի անձն էր։

Վրաստանի քաղաքական անկախութեան կորուստը նրան մեծ մտատանջութիւն էր պատճառում։

Բարաթաշվիլին լինելով նեղ մտքով հայրենասէր, ողբում էր վրաց թագաւորութեան կորուստը և հայրենիքի «գերութիւնը»՝ իր բանաստեղծութիւնների մէջ։

Նա երգում էր և՛ սէր, և՛ բնութեան գեղեցկութիւնը—Կուր գետը, ս. Դաւթի սարը, որոնք յիշեցնում էին բանաստեղծին հայրենեաց անցեալ փառքը, սակայն նրա բանաստեղծութիւնների մեծագոյն մասը նուիրված էր «խեղված» հայրենիքի դարդ ու ցաւերին։

Մի խօսքով, Բարաթաշվիլին վրաց Գամառ-Քաթիպան է, որ երգում է Հէրակլի կռիւը պարսիկների հետ, ինչպէս Գամառ-Քաթիպան երգում է Աւարայրի դաշտը՝ Վարդանանց պատերազմը։

Բանաստեղծը մեռաւ 1848 թւին, 32 տարեկան հասակում։

Բժ. Գօմարտէլին յայտնի է որպէս ընկերվարականօրէն մտածող, բայց այդ գիշեր նա այնպիսի ուժգնութեամբ զանգահարեց ազգայնականութեան զանգը, որ արժանացաւ հաւաքված վրացի արիստոկրատների բուռն ծափահարութիւններին, որոնք չը մոռացան միաժամանակ հեգնական բացագանչութիւններ ուղղել դասախօսի հասցէին, ֆրօնտի փոփոխութեան համար։

Գալով Գ. Ռօբակիձէին, պիտի ասենք, որ նա, տիրապետելով վրաց լեզուին, կարողանում է ունկնդիրների ուշադրութիւնը գրաւել, մանաւանդ որ նրա արտաքին ձևերն ու ժեստերը նպաստում են դասախօսութիւնների աջողութեանը։ Նա բանաստեղծօրէն նկարագրեց Բարաթաշվիլու «Հոգեկան դրաման»՝ խլելով ներկայ եղողների բուռն ծափերը։ Նրա ասածները համարեա նոյնն էին, ինչ որ Գօմարտէլունը, միայն բանաստեղծօրէն արտայայտված։

Մեր կարծիքով նրա լեզուն շատերին մատչելի չէ, որովհետև գործ ածվող բառերի մի մասը անհասկանալի են հասարակութեան համար։

Թատրօնը լիքն էր հասարակութեամբ։

Յ. Գ.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Նահանգական դատարանը Ալէքսանդր Սաֆարօվին, որի մասին յայտնեցինք երէկվայ համարում, մեղաւոր ճանաչեց և դատապարտեց մի տարով բանտարկութեան։

—

Թիֆլիսում հրատարակվող «Русскій съ Кавказа» թերթի այս տարվայ № 17-ում տպված էր մի անստորագիր յօդուած «Տարօրինակ պրօգիմնազիա» խորագրով։ Հաւլաբարի արական գիմնազիայի տեսուչ Գուլաձէն, յիշեալ յօդուածի մէջ տեսնելով զրպարտութիւն իր հասցէին, դատի կանչեց լրագրի խմբագիր Դ. Պիսէմսկուն։

Նահանգական դատարանը քննելով այդ գործը հոկտ. 27-ին, Պիսէմսկուն գտաւ մեղաւոր և դատապարտեց նրան մի ամսով բանտարկութեան ոստիկանատանը։

ՎԱՂԱՄԵՌԻԿ ՄԱՐԳԱՐԻՏ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Դագաղի վրա պսակ դնելու փոխարէն ստացանք Կ. Բաբայեանից 3 ր., Յ. Կէօնճիեանցից 2 ր., Ա. Յովսէփեանից 1 ր. 50 կ., Ն. Սողոմոնեանցից 50 կ., Յ. Տէր-Յարութիւնօվից 50 կ., ընդամենը 7 ր. 50 կ.—յօգուտ աղքատների։

Մնացական Խունունցը պսակ դնելու փոխարէն նուիրել է Հայոց Ազգագրական Ընկերութեանը 20 րուբլի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մօտ օրերս կայանալու է նահանգական զեմստվային խորհրդակցութեան բիւրօյի նիստը առանձին հրաւիրված անձերի մասնակցութեամբ՝ կարգի բերելու համար նահանգական խորհրդակցութեան աշխատանքները և մի ընդհանուր զեկուցում պատրաստելու Կովկասի Փոխարքայի դիւանատանը ներկայացնելու համար։

◆ Կիրակի օրը, նոյեմբերի 1-ին, Թիֆլիսի Արտիստական Ընկերութեան համերգային դահլիճում Իւրեյ Նիկ. Միլիւտինը դասախօսութիւն կը կարդայ Կովկասի զեմստվօյի և հոկտ. 17-ի միութեան համագումարի մասին։ Ապա Ա. Խատիսեանը կը դասախօսէ նոյնպէս զեմստվօյի մասին և տեղեկութիւն կը տայ նահանգական զեմստվային խորհրդակցութեան աշխատանքների մասին։ Վերջում Ֆ. Գոգիչայշվիլին կը կարդայ ռեֆերատ Անդրկովկասի ճանապարհների մասին։

◆ Թիֆլիսի նահանգի ազնուականութեան լիազօրութեամբ գաւառական ազնուապարագլուխ իշխ. Գ. Իօս. Թումանօվը գալիք շաբաթ մեկնելու է Պետերբուրգ այն երկաթուղու գործի առիթով, որ ազնուականութիւնը ուզում է կառուցանել Թիֆլիսից մինչև Թէլաւ Սղնախի վրայով։ Ինչպէս յայտնի է, յիշեալ ազնուականութեանը կոնցէսիա է տրված նաև երկաթուղի անցկացնել Կախէտիա, որի արժէքը նախագծով հաշված է 9 միլիոն րուբ.։ Միևնոյն ժամանակ ազնուականութեանը խոստացվեց թոյլտուութիւն տալ կառուցանելու լայնանիւ երկաթուղի, եթէ ծախքերը 12 միլիոնից չեն անցնի։ Այս երկաթուղու սկզբնական աշխատանքները կատարված են, որից պարզվում է, որ իսկապէս 12 միլիոնը բաւական կը լինի։ Այս բոլոր տեղեկութիւնները ուղարկված են արդէն ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան յատուկ մասնաժողովին, որը այս օրերս քննութեան կառնէ նրանց։

◆ Ստացանք բժշկապետ Ա. Բաբայեանի «Եկեղեցական առողջաբանութիւն» գիրքը, որ հեղինակը ձօնել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս Բ. Իզմիրլեանին։ Բաղկացած է 104 էջից և արժէ 50 կ.։ Այս գրքի մասին մենք կը խօսենք առաջիկայում։

◆ Վաղը, հոկտ. 30-ին, երեկոյեան ժամը 8-ին Թիֆլիսի նահանգական դատարանի շէնքի մէջ տեղի կունենայ Կովկասեան Իրաւաբանական Ընկերութեան նիստը, ու-

---

կացեալ էր, սուլթանին աչքին գէշ տպաւորութիւն պիտի ընէր. տեսուչը իր դիրքը կրնար կորսնցնել. անկէ յետոյ այս էր կայսեր graçieuse volonté-ն։

Տարիներով պետութեան ծառայած պաշտօնեայ բարեկամիս քանիցս միւդիրը ուզեց պատուանշանով մը վարձատրել անոր պարկեշտ աշխատանքը, և ամեն անգամ մերժուեցաւ մականունին «եան» վերջաւորութեանը համար։ Միւդիրը, գրեթէ ամօթահար, խորհեցաւ հայուն անունը երկու աննշան և անարժան թիւրք պաշտօնեաներու անուններուն մէջ խոթելով՝ կայսեր ուշադրութեան մաքսատունէն փախցնել։

Համիդ իր հաւատարիմ և վստահ թիւրքերը Եւրոպա ղրկեց, յառաջ քշեց։

Գերմանիայէն քաջ ռազմագէտներ վերադարձան։ Բժիշկ, ճարտարագէտ, ճարտարապետ՝ ամենքն ալ իսկոյն տեղաւորուեցան, Մաբէյինի հետ փոքր յարաբերութեամբ՝ հսկայաքայլ ասպարէզներ կտրեցին անցան, այնքան արագ, որ հիմա ետ դառնալու կը հարկադրուին։

Հին րէժիմը, առանց հաշուելու մեր մեծագումար զոհերու թիւը, հայ տարրը նիւթապէս ջախջախեց, տարագիր ցրուեց զայն, բարոյապէս ալ տապալեց։

Մեր եպիսկոպոսները կայսեր veto-ին չենթարկուելու համար ազգին իրաւունքները ծախեցին, խուլ մնացին թեմին խնդրանքին. ժողովրդին կենսական գործերը անտէր մնացին. հայը բանտին խորը փճացաւ. արտասահմանէն եկող հայը իր մահամերձ զաւակն անգամ չկրցաւ վերջին անգամ համբուրել։

Թիւրք աքսորեալները, համոզուած՝ որ մահը իրենց յատկացեալ չէր, ազատ վարմունքով և լեզուով գայթակղութիւն կը յարուցանէին. անոնց կրկին պատիժը աքսորավայրին փոփոխումն էր միշտ վճարուած պաշտօնով։

Այս երեսուն տարուան շրջանին մէջ, այս դրութեամբ, թիւրքը, հայուն բաղդատմամբ, օրէ օր տեղ կը վաստկէր, կը հարստանար, կը զօրանար. դպրոցներ և հիւանդանոցներ նորանոր կը հաստատուէին, միշտ իսլամին յատկացեալ. և մենք գահավէժ իջանք անճանաչելի վիճակով, այն աստիճան արգահատելի, որ Մուհամմէդ V անգամ զարմացած իր մտերիմներուն հարցուցեր է, թէ ո՞ւր են, ինչո՞ւ չեն գար երբեմնի Բէօշէքները, Պալեանները, Տիւզերը։ Ա՜խ, վեհապետ. միայն անո՞նք. ապա ամբողջ Անատոլիի մէջ գտնուած մեծահարուստները, որոնց տունը՝ աւերակ, գերեզմանին իսկ անճանաչ. և այսօր մեր ազատամիտ թիւրք եղբայրները չգոհանալով անցեալին մէջ մեր կրած բարոյական, իրական և կեանքի կորուստները՝ Ադանայի 20,000 անմեղ հայերու արիւնը իբր արեան տուրք կուզեն համարել 300 քաջարի օսմանցիներու արեան, որոնք [illegible] օսմանեան գահին վրան բազմեցուցին։

Անհաւասարելի է ինչ կորսուինք և ինչ շահեցանք։

Եթէ արդարութիւնը իր թեւերը մեր հայրենիքին վրան տարածեց և քանի որ Համիդի վարչութեան հաշուետոմարին քննութիւնը կը կատարէք, եթէ Ադանայի ջարդը Պոլսոյ դէպքին զոհերուն համապատասխանող նշանակէք, հաճեցէք և մեր հին առկախ հաշիւները քննել և կարգադրել, մեզ հատուցանել բռնակալութեան կողոպուտը և իրաւանց զրկումը ու Համիդին մեզ թողուցածը մեր ձեռքէն առնելու մի աշխատիք։ Այլ քանի որ Նէմլի-զադէ մը երեսփոխանի աթոռին վրայ բազմեցաւ, թէպէտ առանց բառ մը արտաբերելու, այդ բաւական է հոգեվիճակը ցոյց տալու ձեր ազատ և արդար գործունէութեան և համոզումին։ Պաշտօնական ազդին վերջաբանը ճիգ մըն է, որով երկու կոմիտէները իրենց մեծագորդ ձայնով լռութեան դատապարտել կուզեն Հայաստանի դաշտերէն հանապազօր հասած որբերուն աղեկտուր հառաչանքը։

Լաւագոյն չէ՞ այս վերջին յօդուածը հսկայակերտ տապանատունը անուանել համիդեան զոհերուն, զոր օսմանցիութիւնը պերճագեղ կուզէ կանգնել ի յիշատակ երկու կուսակցութեան համերաշխութեան պայմանագրութեան թուականին։

Հո՛ս պիտի հանգչին այսուհետև 33 տարուան մէջ հայութեան կորսուած բիւր-բիւրոց տարաբաղդ զաւակներուն նշխարները։ Հո՛ս պիտի հաւաքուին թիւրք ճշմարիտ ազատականները, Պոլսոյ վերջին դէպքին առթիւ վաղամեռիկ սպաներուն և Ադանայի կոտորածին 20,000 անմեղ նահատակներուն աճիւնները։

Համազգային մեռելատանն է, որուն դռները իցի՜ւ թէ նախախնամութիւնը այլ ևս իր ողորմած բանալիով յաւէտ կըղպուած մնալու դատապարտէր։

Լ. Կ.

(Վերջ)

Անտուշեվիչը մի ռեֆերատ կը կարդայ «Կին-փաստաբաններ» թեմայով։

◆ Թիֆլիսի նահանգական ազնուականութեան պարագլուխ իշխ. Գ. Ա. Բագրատիոն-Դաւիդովը, վերադառնալով Պետերբուրգից, ստանձնեց իր պարտականութիւնները։

◆ Թիֆլիսի ոստիկանապետն առաջարկել է պրիստաւներին որոնել և գտնել քաղաքում անյայտացած 15 տարեկան Շուշանիկ Թաթուլեանին։

◆ Կովկասի Փոխարքայի կարգադրութեան համաձայն, Նրա դիւանատունը առաջարկել է Բագուի քաղաքապետին միջոցներ ձեռք առնել շուտափոյթ առնելու Բագուի նաւթարդիւնաբերողների համագումարի խորհրդից և Բագու քաղաքից նրանց վրա բարդված պետական գանձարանի տուրքերը քաղաքապետութեան և ոստիկանութեան համար, որոնց գումարը հասել է մինչև 2.120,841 ր. 59 կոպէկի, որից Բագու քաղաքի բաժինն է 716,844 ր. տուրքեր և 150,000 ր. ոստ. ռոճիկ, նաւթարդիւնաբերողներինը՝ 711,020 րուբլի տուրքեր և 543,440 ր. ռոճիկ։ Առայժմ միջնորդութիւն է յարուցված չառնելու քաղաքից տուրքերը։

◆ Թիֆլիսում հրատարակվող «Իվէրիա» վրաց օրաթերթը դադարեց լոյս տեսնելուց։

◆ «Зак.»-ի ասելով, Լէնքօրանում եղել են խոլերային դէպքեր։

◆ «Մշակի» № 238-ում, հանգուցեալ օր. Մարգ. Մարտիրոսեանի դագաղի վրա ծաղկեպսակ դնելու փոխարէն ստացված նուէրներից մէկի նուիրատուի անունը սխալմամբ լոյս է տեսել Կար. Քրիստափորեան, փոխանակ լինելու Յարութիւն Քրիստափորեան։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Զուդերմանի «Պատիւ» 3 գործ. կոմէդիան, որ խաղացվեց Արտիստական Թատրոնում, հոկտ. 27-ին, գրաւել էր մեծ բազմութիւն, շնորհիւ գների հանրամատչելիութեան. այդպիսի հանգամանքը մեզ խորհել է տալիս, թէ աւելի լաւ չէ՞ր լինի, եթէ գները միշտ մատչելի լինէին։ Այդ դէպքում Թատրոնը լիքը կը լինէր միշտ։

Մեր կարծիքով, ժամանակ է այժմ, արտօնեալ փոքրամասնութեան յարմարվելու փոխարէն (որը երբէք Թատրոն չէ յաճախում), ընդառաջ գնալ մեծամասնութեան պահանջներին։ Խաղը շատ գեղեցիկ անցաւ։ Բարաթովը գիտէ Թովել, գրաւել իր մըտածված և խորունկ կերպով ըմբռնված խաղով։ Նա այդ գիշեր իր դերի մէջ աննման էր։ Բորսկայան, Կրէչէտովան, Դաւիդովը, Շէրը շատ գեղեցիկ կերպով կատարեցին իրանց դերերը։ Միւսները նոյնպէս լաւ էին իրանց դերերում։

Մարդ լիակատար էստեթիքական բաւականութիւն է ստանում յարգելի դերասանների խաղից և մի բոպէ մոռանում է իրան, կարծելով որ տեսածն ու լսածը իրականութիւն է և ոչ թէ բեմական խաղ։

Երբևիցէ մենք էլ ունենալու՞ ենք արդեօք սեփական Թատրոն ու կատարեալ դերասաններ։ Յ. Գ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

27 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Օրվայ ընթացքում խոլերայով հիւանդացան 10, մեռաւ 1 հոգի։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը Դումային առաջադրութիւն է արել նորից եօթ միլիօն րուբլի յատկացնել տարրական ժողովրդական կրթութեան կարիքների համար։

Դումայի 7-րդ բաժինը, քննելով Բրօդըսկու ընտրութեան գործը, որոշեց պահանջել իսկական ընտրական գործը արձանագրութեան հետ միասին։

ՍԻՄՖԵՐՕՊՕԼ։ Մի շաբաթում Եալտայում և շրջակայքում խոլերայով հիւանդացան 30 մարդ։

ՌԵԱԶԱՆ։ Սապօժկա քաղաքի մի թաղում այրվեցին երկու տուն։ Կրակին զոհվեցին 11 հարսանիքաւորներ։

ԱՍՏՐԱԽԱՆ։ Ծովային փոթորկի ժամանակ կորցվեց 215,000 պուդ մազութ, 25,000 պուդ նաւթ և կերոսին։

ՆՕՎՕԶԵՐԿԱՍԿ։ Անասունների մէջ երևացել է վարակիչ հիւանդութիւն։ Ներկայումս հիւանդ են 700 գլուխ։

ԳՐՕԴՆԱ։ Դատաստանական պալատը Պետերբուրգի երդւ.-հաւ. Գիլերսօնին դատապարտեց 129--րդ յօդուածով միամեայ բանտարկութեան։

ԿԻԵՎ։ Վօլժսկօ-Կամսկի բանկի բաժանմունքում գողացվել էին փոխանակագրեր, որոնց վրա կեղծելով վերատեսչի և հաշւապահի ստորագրութիւնները՝ գողացողներին աջողվել է Սարատովում, Պերմում և Սիմբիրսկում ստանալ մօտ 200,000 րուբլի։ Սպասվում են տեղեկութիւններ ուրիշ քաղաքներից։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Յ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ—ատամնաբոյժ—$8^{1}/_{2}$—$11^{1}/_{2}$ ժ., պլօմբներ և արհեստական ատամներ։

Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9^{1}/_{2}$—11 ժ. աչքի, ներքին և ներարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթուվեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ,

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Ն. Վ. ԱԼԲՐԵԽՏ—$1^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.։

Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—$6^{1}/_{2}$ ժ մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԻՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինօվսկայա փող № 8
(օ. մ.) 783. 100—40

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր (առաւօտեան ժ. $12^{1}/_{2}$—2.
(երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 9—11.
Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.
(ա. օ.) 1044. 100—21

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ներքին և ջղային հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր { առաւօտեան 9—12 ժ.
երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 1087. 100—12

II ՄԱՍՆԱԳԻՏ. ԴԱՍԱՐԱՆ (ճախավերջին)
ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ԱՌԵՒՏ. ՈՒՍՈՒՄՆ. ԱՍՏԻՃԱՆ. ԵՒ ԱՅԼ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՎ
բացվում է Նոյեմբերի 1-ից։ Պարապմունքները ցերեկվայ ժամը $4^{1}/_{2}$-ից։ Կէս տարվայ վճարը՝ 60 րուբ. ստացվում է սկզբից։ Ծառայողները վճարում են մաս-մաս։ Վելիկօկնեաժեսկայա փ., № 17, մուտքը Միխայլօվսկի պր., № 16—18, Վօրօնցօվի արձանի մօտ։
(օ. մ.) 1118. 5—4



Ա Ր Ծ Ա Թ Է Ժ Ա Մ Ա Ց Ո Յ Ց
Միայն 4 ր. 95 կ., 2 հատը՝ 9 ր. 50 կ.
Ձվէյցարական մի ֆաբրիկայի լիկվիդացիայի ժամանակ գնելով մեծ քանակութեամբ արծաթէ ժամացոյցներ, մենք հնարաւորութիւն ունենք միւս ֆիրմաներից կէս գնով էժան վաճ.։ Ինչո՞ւ փողերը կորցնել սև ժամաց. համար, քանի որ 4 ր. 95 կ. դուք կարող էք մեզ մօտ ձեռք բերել 84 յարգի արծաթէ ժամաց., որը, նոյնիսկ 10 տարի անցնելուց յետոյ, ունի իր արժէքը։ Արծաթը ընդմիշտ փող է։ Ուղարկում եմ գեղեցիկ ժամաց., շատ տափակ, նորաձև, ընթացքը քարերով, ֆանտազի մետաղէ ցիֆերբլատով, լարումը կոթից՝ 40 ժամը մի անգամ, «Րէմօնտուար»։ Փականները միանգամայն շբեղ գրավիւրներով։ Ուղղված մինչև րոպէները, 6 տարվայ երաշխաւորութեամբ։ Վճարվիր վճ. և առանց կանխավճարի։ Մինչև 4 հատի ճանապարհածախքը 40 կ. (Սիբիր 75 կ.)։ Մօդայի շղթաներ արծաթից, 84 յարգի, էլեգանտ շինուածք, հատը 2 ր. 50 կ., 3 ր. 50 կ., 5 ր.։
Հասցէն՝ Т-во „ПАТЕНТЪ", Варшава, Св. Креста 48.
Խնդրում ենք հասցէն կտրել և ամուր կպցնել ծրարի երեսին։
(B. 63718) 1020. 11—5

ԲԺԻՇԿ
Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների։ Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։
Կօջէվնիկովսկայա փ., № 6, «Վէցզել» հիւրանոցի մօտ։ (ե. հ. շ.) 955. 100—18

ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԷԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Յ. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ սրսկումներ, լուացումներ (спринцов.), վէրքի փաթաթումն, ղեղերի քսումն (втиранie) Նայլն։ Էլեկտրականութիւն ըէվմատիզմի, պարալիչի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ։ Մասսաժ էլէկտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասսաժ։ Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկների։ Տալիս է այլ և այլ բժշկական-առողջապահական խորհուրդներ։ Կարելի է և գրաւոր, ներփակելով վարձատրութիւն ըստ կարողութեան։ Ընդունելութիւնը 3—4 ժամը։ Семеновская ул., № 9, Վօրօնցօվի կամուրջին մօտ։
(օ. մ.) 857. 0—23

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Հ. Բ. Ընկ. Նպաստով պահվող դպրոցների համար շուտով
հարկաւոր են
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ
Դիմել անձամբ Ընկերութեան գրասենեակը
(Абасъ-Абадская площ. № 7, с. д.).
1153. 1—1

ԻԳԱԿԱՆ ՆԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ
հայկական մասի կար ու ձևի ուսումնարանում (որը գտնվում է Սուրբ-Նշանի եկեղեցու բակում) ընդունվում են պատուէրներ շատ էժան գներով
ԿԱՆԱՆՑ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
հագուստների ու սպիտակեղէնի։
1164. 1—1

ՀՐԱՏԱՐ. Գ. ԳԱԼՍՏԵԱՆԻ, № 39.
Լոյս տեսաւ
ԳՐԱԲԱՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ, ԽՈՆԱՐՀՈՒՄԸ ԵՒ ՆԱԽԴԻՐՆԵՐԸ
Ստ. Մալխասեանի
ԳԻՆԸ 25 ԿՈՊ.
Դիմել «Գուտտենբերգ» գրավաճառանոցին։
(օ. մ.) 1159. 3—2

Տալիս եմ
ԱՆԳԼԻԵՐԷՆԻ ԴԱՍԵՐ
Նպաստաւոր պայմաններով։
Դիմել՝ Пассажъ Хосроева, № 11.
(ե. հ. կ.) 1109. 6—5

Լոյս տեսաւ
Մ. ՋՄՇԿԵԱՆԻ
1910 Թ. „ԾՈՅՍ" ՕՐԱՑՈՅՑԸ
յայտնի հետաքրքրական գուշակութիւններով։ Հասցէն՝ Թիֆլիս, Մակար Ջմշկեան։
(հ. կ.) 1086. 12—6

ՄԻ ՀԱՅՈՒՀԻ
Նորեկ, որոնում է՝ երեխաներին խնամելու կամ տնտեսուհու պաշտօն ընտանիքներում։ Համաձայն է և օտար քաղաքներ գնալու։ Հասցէն՝ Красногорская, № 30.
1131. 2—2

Լոյս տեսաւ և վաճառվում է
ՓԱՐՈՍ
ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑ 1910 ԹՒԱԿԱՆԻ
Հարուստ ու ճոխ բովանդակութեամբ։ Պարունակում է իր մէջ մի շարք յայտնի գրական գործիչների յօդուածները, գրած յատկապէս օրացոյցի համար։ Ունի հաւելուած մէջ դեռ լոյս չը տեսած արժէքաւոր յաւելուած «ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ» վերնագրով, որի մէջ զետեղված են քսանհինգ հայ գրագէտների պատկերները իրանց համառօտ կենսագրական և գրական գոյնը որոշող յօդուածներով։ Վեհ. Կաթողիկոսի և Մինաս Չերազի պատկերներով։
ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ.
Մասն I. 1) Շարժական և անշարժ տօներ, 2) Կայսերական տօներ, 3) Պասկի արարողութեան թոյլատրելի օրեր, 4) Օրացոյց 1910 թւականի, 5) Ժամերի համեմատական ցանկը, 6) Որ օրը խանութները պիտի փակել։
Մասն II. 7) Ջեմստվօ, 8) Օրէնսգրքեր, 9) ա) Զինուորագրական կանօններ, բ) Ինչ արժէ զինուորական ծառայութիւնը, 10) Մեծ պետութիւնների զինուորական բիւջէները, 11) Քաղաքական. Մերձաւոր Արևելքի վերածնութիւնը, 12) Երկրաբանական. Երկիրը կը մեռնի ծարաւից, 13) Հիւսիսային բևեռի բացումը, 14) Աստղագիտութիւն. ա) Տարվայ յարատևութիւնը, բ) Տիեզերք. Տարրական հասկացողութիւններ աստղագիտութիւնից, գ) Մոլորակների համեմատական աղիւսակ, 15) Գիտական երազահան. ա) Երազների վաղեմի բացատրութիւնը, բ) Երազները կեանքի արտացոլումներ են, գ) Երազի հոգեբանութիւնը, դ) Երազները և մեր հիւանդութիւնները, ե) Երազները և նրանց նշանակութիւնը, 16) Առողջապահական. ա) մենք շատ ենք ուտում, բ) Սննդի նօրմալ բաժինը 24 ժամվայ համար, գ) Մարսողութեան ցանկը, դ) Մածուն և կէֆիր, ե) Առողջ մարդու ննջարանը, զ) Հագուստը, 17) Գիւղատնտեսական. Երկրագործական գործիքների և մեքենաների մասին. Ա. Աթանասեան, 18) Գիտական. Ջուրը. Յ. Ակունեան. 19) Լեզուագիտական. ա) Էսպէրանտօ կամ միջազգային լեզու, բ) Գլխաւոր լեզուների տիրապետութիւնը, գ) Բարքեր. մեռելների այրումը, 20) Ֆէլիէտօն. Կապը կտրած կինը. Նար-Դոսի, 21) Դպրոցական. ա) Ուսումը ապագայում. Ղ. Աղայեան, բ) Ազատ մանկան տունը. Կ. Վէնցելի, 22) Կենսագրական. ա) Մատթէոս II, Կաթողիկոս Ամենայն Հայոց, բ) Մինաս Չերազ, 23) Առևտրա-Արդիւնաբերական. ա) Ընդհանուր ակնարկ, բ) Առևտրական և ֆինանսական հաստատութիւններ, գ) Գիւղական բանկեր. Ս. Ղալաչեան, դ) Հարկեր և տուրքեր, ե) Պարապմունքի հարկեր, զ) Նոտարական ծախսեր, է) Մուրհակի մասին, ը) Պարտաթուղթ, թ) Պահպանութեան թուղթ, ժ) Տուգանքի թուղթ, ժա) Կանխավճարի մասին, ժբ) Նաւթ, 24) Պօստ. (Կանօնադր. Նորագոյն հրատարակ.։ Այս տարի վերցված է միայն ներքին յարաբերութիւնը լիակատար (45 երես) մանրամասն սակագներով և ցուցակներով)։ 26) Անեկդօտ, 26) Զուարճալիք. ա) Զուարճալի խնդիրներ, բ) Ինչպէս գտնել մէկի տարիքը, գ) Տասներկու անաչող փորձ (սալօնի խաղեր), 27) Ծովք. Վ. Փափազեանի, 28) Ստատիստիկա, 29) Արհեստակցական։
Յաւելուած։ ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ։ Գեղեցիկ թղթի վրա, 64 երես, համառօտ կենսագրական բնորոշ յօդուածներով։
ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.
Օտար քաղաքացիներին 100 օրինակ պահանջելու դէպքում 20% զեղջ և պօստի ծախսը մեզ վրա։ Դիմել՝ Типографія «Эпоха» В. Вартаняну.
(հ.) 1137. 0—2

ՄՍԻ ԿԱՐԿԱՆԴԱԿ Փոռձված իր սեփ. երեխայի վրա ԻՍԿԱԿԱՆ
ԵՒ ՓՈՇԻ **ՌՕԲՕՐԱՆ** ՍՆՆԴԱՐԱՐ ՆԻՒԹ
«Րօբօրան» Ա. ԴՄԻՏՐԻԵՎԱՅԻ, Թոյլատրված Պետերբ. Բժշկ. Վարչ. № 7252 գրութեամբ։
Այնպիսի հիւանդութիւնների համար, որոնք առաջացնում են ՆԻՀԱՐՈՒԹԻՒՆ և ՈՅԺԵՐԻ ՍՊԱՌՈՒՄՆ—արեան պակասութեան, ջղերի քայքայման, թարախաբնոյթ պրօցեսսի, ոսկրախտի, աղիքների հիւանդութեան և ԳԼԽԱՒՈՐԱԲԱՐ ԹՈՔԵՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ժամանակ։ Վաճառվում է յայտնի դեղատներում և դեղավաճառանոց-պահեստներում։ Կարկանդակի փաթեթի գինը 75 կ., իսկ փոշունը՝ 1 ր. 50 կ.։ Մանրամասն նկարագրութիւնը—հանդերձ բժիշկների և հիւանդների գովասանական վկայութիւններով—ՁՐԻ։
Թիֆլիսի ներկայացուցիչ՝ Ե. ՀԷՔԷՔԵԱՆ. Վելիամինօվսկայա փող., № 4, «Շօկօլադ» կօնդիտերսկում։ (կ. ե. հ.) 999. 0—15

—○ ԿԱՇՈՒԵՂԷՆԻ ՊԱՀԵՍՏ ○—
Եղբ. ԵԱՐՂՈՒԼԵԱՆՑՆԵՐԻ
Թիֆլիս, Միջին փողոց, № 65.
Յայտնում ենք ի գիտութիւն յարգելի վաճառականների և հասարակութեան, որ մեր պահեստում ստացված են մեծ քանակութեամբ ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ (галоши) և ԿՐՆԿԻ ՌԷՏԻՆՆԵՐ, զանազան տեսակ ՇԷՎՐՕՆԵՐ, ԲՕՔՍԵՐ (խրօմ) ու ամեն տեսակ ԿԱՇՈՒԵՂԷՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ—Ռուսաստանի և արտասահմանի արդիւնաբերութիւն, նոյնպէս և կօշկակարների գործիքներ ու կօշկադեղեր յայտնի ֆիրմաների։ Ինչպէս կրկնակօշիկները, նոյնպէս և բոլոր ապրանքները ծախում ենք—մեծաքանակ (оптомъ) գնողներին գործարանային գներով, իսկ հատավաճառը (розничн. продажа) ամենաձեռնտու գներով։ Ունենք բաժանմունք ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, որտեղից նոյնպէս կարելի է ստանալ կաշուեղէն և գալանտերէյնի ապրանքներ ձեռնտու գներով։ Վարշավայի բաժ. հասցէն՝ Варшава, Лешно № 8, М. Н. Яргулову.
(կ. հ.) 938 30—14

1897 թ.
„ՊՐՕՎՕԴՆԻԿ" ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
1888
~ ՌԻԳԱՅՈՒՄ ~
Անդրկովկասեան ֆաբրիկային պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՍՕԼՕԼԱԿՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ № 4
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ
Կառքերի համար ռէզինէ շիններ.
Աւտօմօբիլների համար պնէվմատիկ շիններ. «ԱԼՄԱԶ» (կարմիր).
Վելօսիպեդների համար պնէվմատիկ շիններ.
Աւտօմօբիլ-օմնիբուսների համար խիտ-ռէզինէ շիններ.
ՊՐՕՎՕԴՆԻԿ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ արդիւնաբերած շինները երկար տարիների ընթացքում ճանաչված են իբրև առաջնակարգ և բարձր են կանգնած արտասահմանեան ամենալաւ ֆաբրիկաների շիններից, որի համար վկայում է ոչ միայն նրանց վերաբերմամբ եղած խոշոր պահանջը Ռուսաստանի սահմաններում, այլ և գլխաւորաբար մեծ քանակութեամբ արտասահման արտահանելը։
№ 3 1036. 0—2

Электропечатня Ав. Мугдусіакспова съ С-ми. Большая Ванкская № 3.